Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-717-20.11.2023,10.01.2024-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է թանգարանների գործունեության հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանում է թանգարանների տեսակները, գործառույթները, Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի ձևավորման, համալրման, հաշվառման, պահպանության, օգտագործման, անվտանգության, թանգարանների աշխատողների իրավունքների և պարտականությունների, թանգարանային կրթության իրավական հիմքերը:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հասկացությունները.

1) թանգարան՝ ոչ առևտրային կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որը հավաքում, պահպանում, ուսումնասիրում և հանրայնացնում է նյութական պատմամշակութային ժառանգության առարկաներ և ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքներ, հասանելի է հանրությանը և իրականացնում է սոցիալ-մշակութային, գիտահետազոտական, կրթական գործունեություն.

2) մշակութային արժեք՝ մարդկային կենսագործունեության արգասիք համարվող առարկաներ և ստեղծագործություններ, որոնք, անկախ ստեղծման ժամանակից, ունեն

հնագիտական, ազգագրական, պատմական, կրոնական, գեղարվեստական, գիտական կարևոր նշանակություն և մշակութային արժեքի կարգավիճակ են ստացել փորձաքննության հիման վրա.

3) թանգարանային առարկա՝ թանգարանային հաշվառում անցած և կարգավիճակ ստացած բնօրինակ մշակութային արժեք կամ գիտական սկզբնաղբյուր, որի հատուկ որակական հատկանիշներն անհրաժեշտ են դարձնում վերջինիս ներառումը թանգարանային հավաքածուի մեջ, մշտական պահպանությունն ու կիրառումը գիտության, կրթության առաջընթացի, ինքնության, արժեհամակարգերի ձևավորման և զարգացման նպատակով.

4) թանգարանային նշանակության առարկա՝ մշակութային նշանակության առարկա, որը կրկնօրինակ է, չի հանդիսանում գիտելիքի և զգայության սկզբնաղբյուր և չունի թանգարանային առարկային բնորոշ հատկանիշներ և որակ, ուստի այն չի ընդգրկվում թանգարանային հավաքածուի հիմնական մասնաբաժնում.

5) թանգարանային առարկաների և հավաքածուների հաշվառում՝ թանգարանային առարկաների և հավաքածուների հաստատված կարգով գրանցում, ուսումնասիրություն և փաստաթղթավորում.

6) թանգարանի գլխավոր մատյան՝ թանգարանային առարկաների և հավաքածուների հաշվառման հիմնական փաստաթուղթ, որը տվյալներ է պարունակում թանգարանային առարկայի և հավաքածուի մասին.

7) **թանգարանային հավաքածու՝** թանգարանի տիրապետության տակ գտնվող, թանգարանային առարկաների հաշվառման գլխավոր մատյանում ներառված թանգարանային առարկաների ամբողջություն, որն ունի գիտական, պատմական, գեղարվեստական և մշակութային արժեք.

8) Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածու՝ մշտապես Հայաստանի Հանրապետության պահպանության ներքո գտնվող, թանգարանների գլխավոր մատյաններում հաշվառված և շարունակաբար համալրվող թանգարանների առարկաների և հավաքածուների ամբողջություն, որն անօտարելի է (բացառության ոչ պետական թանգարանների

թանգարանային առարկաների) և Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգության անբաժանելի մասն է.

9) Հայաստանի Հանրապետության առանձնակի արժեքավոր և բացառիկ կարևորության թանգարանային հավաքածու՝ Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի մաս կազմող բացառիկ թանգարանային առարկաներ, որոնք ենթակա են հաշվառման հատուկ պահպանության համապատասխան պայմանակարգով.

10) Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակ՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմում ներառված յուրաքանչյուր թանգարանային առարկայի և հավաքածուի մասին հիմնական տեղեկություններ պարունակող շտեմարան (ռեեստր), որը ստեղծվում է պետության կողմից մշակութային արժեքների պետական հսկողության նպատակով.

11) թանգարանային առարկայի և հավաքածուի պահպանում, անվտանգության ապահովում՝ թանգարանային առարկայի և հավաքածուի ամբողջության ապահովման համար գիտականորեն հիմնավորված պահպանության հատուկ ռեժիմի ստեղծում, բոլոր տեսակի ռիսկերից պաշտպանում և վտանգների կանխարգելում.

12) թանգարանային առարկայի և հավաքածուի ուսումնասիրում՝ թանգարանագիտության բնագավառում ընդունված տարբեր մեթոդների կիրառմամբ թանգարանային առարկաների և հավաքածուների բովանդակության բացահայտում, արձանագրում և համակարգում.

13) թանգարանային առարկայի և հավաքածուի հանրայնացում՝ թանգարանային առարկաների և հավաքածուների ներկայացումը հասարակությանը հանրային ցուցադրման, գիտակրթական գործունեության, տպագիր և էլեկտրոնային վերարտադրման եղանակներով.

14) թանգարանի հիմնական ցուցադրություն՝ թանգարանի հավաքածուից ընտրված թանգարանային առարկաների և դրանց բացահայտման օժանդակ ու աջակցող միջոցներից ստեղծված հաղորդակցության միջավայր, որը գիտական, գեղարվեստական նախագծման, միջմասնագիտական համագործակցության արդյունքում է ստեղծվում որպես թանգարանային հավաքածուի նպատակային հանրայնացման հիմնական հարթակ և թանգարանի գիտակրթական առաքելության իրականացման առաջնային միջոց.

15) թանգարանային գործ՝ սոցիալ-մշակութային գործունեության մասնագիտական ոլորտ, որը ներառում է գիտատեսական, մեթոդական գիտելիքների, գործնական հմտությունների, կազմակերպչական-կառավարման օղակների ձևավորում և կիրառում, միջգիտակարգային ու միջմասնագիտական համագործակցություն՝ ուղղված թանգարանային առարկաների և հավաքածուների բացահայտմանը, ձեռքբերմանը, հաշվառմանը, պահպանմանը, ուսումնասիրմանը, հանրայնացմանը, թանգարանների արդյունավետ կառավարմանն ու դրանց հասարակական նշանակության բարձրացմանը, թանգարանային ոլորտի մասնագետների պատրաստմանն ու թանգարանային գործունեության տարբեր ուղղությունների մեթոդաբանության մշակմանն ու դրանց կատարելագործմանը, թանգարանների արդիականցմանը:

16**) մշակութային արժեքների փորձաքննություն**՝ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվող մշակութաբանական կամ արվեստաբանական հետազոտություն, որի շնորհիվ տրվում է առարկայի մշակութային արժեք համարվելու կամ չհամարվելու վերաբերյալ փորձագիտական եզրակացություն.

17) **թանգարանի հավատարմագրում՝** թանգարանի չափորոշիչներին և ինստիտուցիոնալ հավատարմագրման համապատասխանության ճանաչումն է թանգարանների ոլորտի օրենսդրության դրույթներին՝ դրանց համապատասխանությունը հաստատելու նպատակով.

18) **թանգարանային կրթություն՝** ոչ ֆորմալ ուսումնառություն, որն իրականացվում է թանգարանային գործառույթներ իրականացնող կազմակերպության կողմից և ապահովում է թանգարանային հավաքածուների զգայական և ճանաչողական հաղորդակցումը և մեկնաբանությունը.

19) **արգելոց-թանգարան**՝ բացօթյա թանգարանի տեսակ կամ մշակութային համալիր կազմակերպություն, որը ստեղծվել է մշակութային ժառանգության թանգարանացման նպատակով հնագույն ժամանակներում պատմականորեն ձևավորված տարածքների վրա հստակ տեղայնացված հուշարձանների սահմաններում՝ ապահովելու վերջինիս հնագիտական, մշակութային և բնական ամբողջական արժեքների պահպանությունը, հետազոտումը և հանրահռչակումը:

Հոդված 3. Թանգարանների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

1. Թանգարանների և Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին», «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին», «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Հիմնադրամների մասին», «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքներով, սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ԳԼՈՒԽ 2.

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ, ԹԱՆԳԱՐԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ՀԱՄԱԼՐՈՒՄԸ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ, ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ, ՕՏԱՐՈՒՄՆ ՈՒ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆՈՒՄԸ

Հոդված 4. Թանգարանների տեսակները

1. Թանգարանները կարող են լինել պետական, ոչ պետական և համայնքային և ունենալ օրենքով չարգելված ցանկացած ոչ առևտրային կազմակերպաիրավական ձև:

2. Թանգարանի գործունեության և թանգարանային առարկաների ու հավաքածուի բնույթով պայմանավորված թանգարանների լինում են հետևալ տեսակների ՝

1) պատմության թանգարաններ՝ որոնց հավաքածուն ներառում է երկրի, ազգի, ժողովրդի, մարզի որևէ պատմական ժամանակաշրջանին կամ իրադարձությանը վերաբերող թանգարանային առարկաներ ու հավաքածուներ, որոնք դասակարգվում են հնագիտական, ազգագրական, երկրագիտական, գրականության և ճարտարապետության թանգարանների.

2) արվեստի թանգարաններ՝ որոնց հավաքածուն ներառում է համաշխարհային և ազգային կերպարվեստի նմուշներ, որոնք դասակարգվում են պատկերասրահ, ժամանակակից արվեստի, դեկորատիվ-կիրառական արվեստի, ժողովրդական արվեստի, լուսանկարչական արվեստի թանգարանների.

3) բնագիտական թանգարաններ՝ որոնք ներառում են երկրաբանական, բուսական և կենդանական աշխարհի նմուշներ, հնէաբանական գտածոներ, տեխնիկայի առաջընթացը ներկայացնող առարկաներ և այլ վավերագրեր, որոնք դասակարգվում են բնության, երկրաբանության, բժշկության, տիեզերքի, կապի, տեխնիկայի թանգարանների.

4) հուշային թանգարաններ՝ որոնք ներառում են մեկ կամ մի քանի անձանց նվիրված թանգարանային առարկաներ և հավաքածուներ.

5) արգելոց-թանգարան՝ հուշարձանախմբի հենքի վրա ստեղծված բացօթյա թանգարան՝ նրա պատմական, գիտական, գեղարվեստական արժեք ունեցող մշակութային ժառանգության ամբողջական պահպանության և հանրահռչակման նպատակով.

6) թանգարան-ինստիտուտ՝ որոնք գիտահետազոտական գործունեությանը զուգահեռ իրականացնում են թանգարանային գործառույթներ, ունեն թանգարանին բնորոշ հավաքածու .

7) կազմակերպության պատմությանը և գործունեությանը նվիրված թանգարաններ:

3. Թանգարանների դասակարգումն ըստ հավաքածուի բնույթի կատարվում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնին կից գործող թանգարանային խորհրդի եզրակացության հիման վրա՝ մշակույթի բնագավառի լիազոր պետական մարմնի սահմանած կարգով:

Հոդված 5. Թանգարանի գործունեության նպատակները և գործառույթները

1. Թանգարանի գործունեության նպատակներն են.

1) բնության, նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությունը և փոխանցումը սերունդներին.

2) գիտականորեն համակարգված, հաշվառված թանգարանային առարկաների և հավաքածուների ձևավորումը.

3) ազգային արժեհամակարգի և քաղաքացիական հասարակության ձևավորմանը նպաստելը:

4) հասարակության գեղագիտական ժամանցի և մշակութային կրթության իրավունքի ապահովումը:

2. Թանգարանի գործառույթներն են.

1) թանգարանային առարկաների և հավաքածուների հավաքումը, համալրումը,_հաշվառումը, պահպանությունը և պաշտպանությունը,

2) թանգարանային առարկաների և հավաքածուների դասակարգումը, հետազոտումը, հրատարակումը և թվայնացումը,

3) թանգարանային առարկաների և հավաքածուների հանրայնացումը (ցուցադրում, հրապարակում),

4) գիտահետազոտական և կրթամշակութային ծառայությունների մատուցումը,

5) մշակութային, զբոսաշրջային և ժամանցային ծրագրերի իրականացումը,

6) թանգարանագիտության բնագավառում հետազոտությունների իրականացումը:

Հոդված 6. Թանգարանի հավատարմագրման չափորոշիչները.

1. Թանգարանը կամ թանգարանի կարգավիճակ ստանալու ցանկություն ունեցող ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, անկախ հիմնադրից և կազմակերպաիրավական ձևից, կարող է հավատարմագրվել: Թանգարանների հավատարմագրումն իրականացնում է մշակույթի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը՝ մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

2. Հավատարմագրումն իրականացվում է հետևյալ չափորոշիչների առկայության դեպքում.

1) տիրապետում է թանգարանին բնորոշ հավաքածուի և իրականացնում է հիշյալ հավաքածուների ուսումնասիրություն, հաշվառում, պահպանություն, համալրում և

հանրայնացում՝ ըստ մշակույթի բնագավառում լիազոր մարմնի կողմից հաստատված պայմանակարգերի.

2) տնօրինում է թանգարանի գործունեության իրականացման համար անհրաժեշտ տարածքներ, թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանման և ցուցադրման պահանջներին համապատասխան նյութատեխնիկական բազա, ապահովված է թանգարանային առարկաների ջերմախոնավային ռեժիմով և անվտանգության միջոցներով, թանգարանային տարածքների և ցուցասրահների հասնելիությունը և խելամիտ հարմարեցումը.
3) ունի մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնի սահմանած թանգարանային աշխատողների մասնագիտական որակավորման չափանիշերին համապատասխան որակավորված անձնակազմ.
4) թանգարանի գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայությունը կամ դրանց մուտքերի աղբյուրը:

3. Սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված չափանիշների առկայության դեպքում տրվում է հավատարմագրված թանգարանի կարգավիճակ 10 տարի ժամկետով վերահավատարմագրման հնարավորությամբ:

4. Հավատարմագրված ոչ պետական թանգարանների նկատմամբ մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմինն իրականացնում է մշտադիտարկում:

Հոդված 7. Թանգարանային առարկաների և հավաքածուների հաշվառում

1. Թանգարանի կողմից թանգարանային առարկաները և հավաքածուները ենթակա են հաշվառման: Դրանց հաշվառման կարգը հաստատում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմինը:

2. Պետական և համայնքային թանգարանների հավաքածուներում հաշվառված պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող թանգարանային առարկաները և հավաքածուները հիմնադրի կողմից ամրացվում են թանգարանին որոշակի ժամկետով կամ անժամկետ՝ անհատույց օգտագործման իրավունքով:

3. Պետական և համայնքային թանգարանի գործունեության դադարեցման դեպքում թանգարանի հաշվառած թանգարանային առարկաներն ու հավաքածուները հիմնադրի կողմից ամրացվում են այլ պետական կամ համայնքային թանգարանի:

4. Պետական թանգարանի կողմից հաշվառված թանգարանային հավաքածուները բաժանման (մասնատման) ենթակա չեն:

5. Հավատարմագրված ոչ պետական թանգարանի կամ Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուում հաշվառված հավաքածու ունեցող ոչ պետական թանգարանի գործունեության դադարեցման դեպքում թանգարանային առարկաներն ու հավաքածուները տնօրինվում են հիմնադրի կողմից՝ տեղեկացնելով մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնին:

Հոդված 8. Թանգարանի հավաքածուի ձևավորումը և համալրումը

1. Թանգարանի հավաքածուն ձևավորվում է մեկ կամ մի քանի թեմայի (կամ գաղափարի) շուրջ՝ ըստ անհրաժեշտության համալրվող թանգարանային առարկաների և հավաքածուների հիման վրա:

2. Պետական թանգարանի հավաքածուն համալրվում է օրենքով չարգելված միջոցներով՝ թանգարանի նպատակներին և համալրման ռազմավարությանը համապատասխան, որը հաստատում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմինը, եթե այդ լիազորությունը թանգարանի կանոնադրությամբ վերապահված չէ այլ մարմնի:

3. Պետական և համայնքային թանգարանի ղեկավարը իր հավաքածուների համալրման գործընթացը կազմակերպելու նպատակով ստեղծում է ֆոնդային-գնահատող հանձնաժողով, որի ձևավորման և գործունեության կարգը հաստատում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմինը:

Հոդված 9. Պետական և համայնքային թանգարանի հավաքածուի համալրման հիմնական եղանակները

1. Պետական կամ համայնքային թանգարանների թանգարանային հավաքածուները համալրվում են հետևյալ եղանակներով.

1) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից թանգարանին թանգարանային առարկայի ամրացում,

2) թանգարանի կողմից գնում,

3) նվիրատվության ստացում,

4) հնագիտական պեղումներ իրականացնող անձի կամ կազմակերպության կողմից հայտնաբերված գտածոների անհատույց ստացում,

5) պետական բյուջեով և օրենքով չարգելված այլ եղանակներով:

6) աճուրդների միջոցով:

2. Ոչ պետական թանգարանների թանգարանային հավաքածունները համալրվում են հիմնադրի կողմից՝ օրենքով չարգելված եղանակներով:

Հոդված 10. Թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանությունը և անվտանգության ապահովումը

1. Թանգարանային առարկաները և հավաքածուները ենթակա են մշտական պահպանության:

2. Թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանությունն ապահովելու համար թանգարաններում սահմանվում է պայմանակարգ և պարբերաբար կամ ըստ անհրաժեշտության իրականացվում է թանգարանային առարկաների և հավաքածուների ամրակայում և վերականգնում՝ ամրակայման և վերականգնման միջազգային չափանիշներին համապատասխան:

3. Թանգարանային առարկաների և հավաքածուների ամրակայման և վերականգնման աշխատանքներն իրականացնում է համապատասխան որակավորում ունեցող մասնագետը (վերականգնողը):

Հոդված 11. Թանգարանային առարկաների և հավաքածուների ժամանակավոր պահպանությունը

1. Թանգարանները կարող են պայմանագրի հիման վրա, վճարովի կամ անվճար հիմունքներով, իրականացնել թանգարանային առարկաների և հավաքածուների ժամանակավոր պահպանություն՝ դրանք չընդգրկելով տվյալ թանգարանի գլխավոր մատյանում:

2. Պետական և համայնքային թանգարանները թանգարանային առարկաները և հավաքածուները կարող են ժամանակավոր պահպանության հանձնել այլ թանգարանների կամ կազմակերպությունների՝ պայմանագրի հիման վրա առավելագույնը 3 տարի ժամկետով՝ պայմանով, որ ապահովվի թանգարանային առարկաների տեղափոխման, ցուցադրման և պահպանման համար անհրաժեշտ անվտանգությունը, ջերմախոնավային ռեժիմը, հասանելիությունը և համահունչ լինի թանգարանային առարկայի միջավայրին: Սահմանված նորմերի համապատասխանությունը գնահատում և հետագայում դիտարկում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմինը: Սահմանված նորմերի անհամապատասխանությանը հիմք է ժամանակավոր պահպանության հանձնելու հարցը մերժելու համար:

3. Պետական թանգարանի թանգարանային առարկայի կամ հավաքածուի ժամանակավոր պահպանության հանձնումն իրականացվում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնի որոշմամբ, իսկ համայնքային թանգարանի թանգարանային առարկայի կամ հավաքածուի ժամանակավոր պահպանության հանձնումը՝ մասնագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա, համայնքի ավագանու որոշմամբ:

4. Պետական և համայնքային թանգարանի թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության են հանձնվում միայն Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի նախագահի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին, փոխվարչապետի գրասենյակին և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը արարողակարգային և նստավայրերում ցուցադրության նպատակով՝ պայմանով, որ ապահովվի թանգարանային առարկաների տեղափոխության, ցուցադրության և պահպանության պայմանակարգը, դրանց անվտանգությունը:

Հոդված 12. Թանգարանային առարկաների և հավաքածուների մատչելիության ապահովումը և հանրայնացման (հրապարակման) իրավունքը

1. Թանգարանային առարկաները և հավաքածուները հասանելի են հանրության համար՝ բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

2. Հայաստանի Հանրապետության **առանձնակի արժեքավոր և բացառիկ կարևորության** թանգարանային հավաքածուում ընդգրկված թանգարանային և մշակութային արժեք ներկայացնող առարկաների վերաբերյալ տեղեկությունները կարող են տրամադրվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի պաշտպանության նպատակով:

3. Թանգարանից օգտվողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են թանգարանների ներքին կանոնակարգով: Թանգարանների ներքին կանոնակարգի օրինակելի ձևը հաստատում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմինը:

4. Պետական թանգարանի գույքամատյանը հասանելի է միայն թանգարանի ղեկավարին և գլխավոր ավանդապահին (ֆոնդապահ): Բացառիկ դեպքերում, գլխավոր մատյանին հասանելիություն թույլատրվում է մշակույթի բնագավառի լիազոր պետական մարմնի կողմից կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտի հիման վրա: Գույքամատյանում գրանցումներ կատարում է միայն թանգարանի գլխավոր ավանդապահը:

5. Թանգարանային առարկաների և հավաքածուների հասանելիությունը կարող է սահմանափակվել՝

1) դրանց պահպանվածության ոչ բավարար վիճակի դեպքերում,

2) դրանց վերականգնման ընթացքում լինելու դեպքում,

3) որոշակի անվտանգային նկատառումներից ելնելով:

6. Բացառությամբ «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» օրենքով նախատեսված դեպքերի՝ թանգարանային առարկաների և հավաքածուների, թանգարանի շենքերի կամ նրա համալիրի մասերի գծապատկերները, տեսապատկերները, կրկնօրինակները և դրանց վերաբերյալ տեղեկույթը գովազդային նպատակով, որպես խորհրդանիշ՝ հուշանվերների կամ այլ ապրանքների արտադրության համար տրամադրելը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կատարվում է պետական և համայնքային թանգարանների դեպքում լիազոր մարմնի

համաձայնությամբ, իսկ ոչ պետական թանգարանների դեպքում՝ սեփականատիրոջ կամ գործադիր մարմնի ղեկավարի թույլտվությամբ:

7. Այն թանգարանային շենքերը, որոնք պատմամշակութային հուշարձաններ են, երրորդ անձանց կողմից դրանց ֆոտոպատկերները, տեսապատկերները կամ գծապատկերները գովազդային նպատակով որպես խորհրդանիշ, պիտակ, հուշանվերների և այլ ապրանքների արտադրության համար օգտագործելը կատարվում է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքով սահմանված կարգով:

8. Արգելվում է թանգարանին հանձնված շենքերում և տարածքներում իրականացնել այնպիսի գործունեություն, որը կարող է վտանգել թանգարանային առարկաները և հավաքածուն կամ հակասում է թանգարանի օգտագործման նպատակներին:

9. Արգելվում է թանգարանների օգտագործումը քաղաքական գործունեության նպատակներով::

Հոդված 13. Թանգարանային առարկաների և հավաքածուների օտարումը, նվիրատվությունը, հաշվառումից հանելը և փոխանակումը

1. Պետական կամ համայնքի սեփականությունը հանդիսացող թանգարանային առարկան կամ հավաքածուն օտարման ենթակա չէ: Արգելվում է Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի մեջ ընդգրկված թանգարանային առարկաների կամ դրանց առանձին մասերի (պատկանելիքների) օտարումը կամ օգտագործումը որպես պարտավորությունների կատարման ապահովման միջոց, պարտքը մարելու միջոց կամ գրավի առարկա, դրանց օտարման վերաբերյալ չեն կարող կնքվել գործարքներ:

2. Արգելվում է պետական սեփականություն համարվող և թանգարանային հավաքածուներում հաշվառված թանգարանային առարկաների նվիրատվությունը:

3. Պետական, համայնքի սեփականությունը հանդիսացող թանգարանային առարկաների փոխանակումը թույլատրվում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում, եթե համաձայն մշակութաբանական և արվեստաբանական փորձաքննության եզրակացության, փոխանակվող առարկան համարժեք է թանգարանային այլ առարկայի: Փորձագիտական

եզրակացությունը տրամադրվում է համապատասխան գործունեություն իրականացնող հավատարմագրված կազմակերպությունը:

4. Պետական թանգարանի թանգարանային առարկայի փոխանակումն իրականացվում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնի ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, իսկ համայնքային թանգարանի թանգարանային առարկայի փոխանակումը՝ համայնքի ավագանու որոշմամբ համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնի փորձագիտական դրական եզրակացության հիման վրա:

5. Պետական կամ համայնքի սեփականությունը հանդիսացող թանգարանային առարկան կամ հավաքածուն թանգարանի հավաքածուի հաշվառումից կարող են հանվել՝

1) թանգարանային առարկայի կամ հավաքածուի ոչնչացման (քայքայման) դեպքում՝ մշակութաբանական և արվեստաբանական անկախ փորձաքննության եզրակացության հիման վրա (բացառությամբ բնագիտական թանգարանների),

2) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով,

3) թանգարանային առարկայի կամ հավաքածուի փոխանակման և մեկ այլ թանգարանի փոխանցելու դեպքում,

4) երբ այն այլևս գոյություն չունի կամ կորցրել է իր մշակութային և գիտական արժեքը:

6. Պետական սեփականություն համարվող թանգարանային առարկան կամ հավաքածուն (բացառությամբ բնագիտական թանգարանների) հաշվառումից հանվում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնի ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, իսկ համայնքային թանգարանի թանգարանային առարկան համայնքի ավագանու որոշմամբ համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնի դրական եզրակացության հիման վրա:

7. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող թանգարանային հավաքածուներից կորած (գտնվելու վայրը անհայտ) առարկաները չեն հանվում հաշվառումից և մնում են հաշվառված:

9. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի մեջ ընդգրկված հավատարմագրված ոչ պետական թանգարանի կամ Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուում հաշվառված հավաքածու ունեցող ոչ պետական թանգարանի թանգարանային առարկաները և հավաքածուները (ամբողջական կամ առանձին) կարող են հանվել հաշվառումից սեփականատիրոջ կամ հիմնադրի որոշմամբ՝ այդ մասին նախապես գրավոր տեղեկացնելով մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնին:

ԳԼՈՒԽ 3.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ԱՌԱՐԿԱՅԱՑՈՒՑԱԿԸ, ԱՌԱՐԿԱՅԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԻ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԵՎ ԲԱՑԱՌԻԿ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ԿԱԶՄԸ, ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ, ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 14. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուն՝ որպես Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգության բաղկացուցիչ մաս

1. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուն Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգության բաղկացուցիչ, անբաժանելի մասն է:

2. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակը (ռեեստրը) վարում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմինը:

3. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի մասին կանոնակարգը և Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուում թանգարանային առարկաները և հավաքածուներն ընդգրկելու և հանելու կարգը հաստատում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմինը:

4. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի պետական մասում ընդգրկված, պետական թանգարանների հավաքածուներում ընդգրկված և համայնքներին հանձնված թանգարանային առարկաները, հավաքածուները համարվում են Հայաստանի

Հանրապետության սեփականությունը, որի կառավարումն իրականացնում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմինը:

5. Պետական և համայնքային թանգարանների վերակազմակերպումից և գործունեության դադարեցումից հետո Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուում ընդգրկված թանգարանային առարկաները և հավաքածուները մնում են Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուում: Վերակազմակերպված և գործունեությունը դադարեցված թանգարանների՝ թանգարանային առարկաների հետագա տնօրինման և պահպանության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 15. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմը և այդ կազմում թանգարանների հավաքածուների ընդգրկումը

1. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուն կազմված է պետական, համայնքային, հավատարմագրված ոչ պետական թանգարանների և Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուում հաշվառված ոչ պետական թանգարանների թանգարանային առարկաներից և հավաքածուներից:

2. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի համայնքային մասն են կազմում այն թանգարանների հիմնական հավաքածուներում ընդգրկված թանգարանային առարկաները և հավաքածուները, որոնք սեփականության իրավունքով պատկանում են համայնքին:

3. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմը համալրվում է Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի մասին կանոնակարգին համապատասխան թանգարանների հավաքածուի առարկայացուցակում գրանցվելու պահից:

4. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուում ընդգրկված թանգարանի հավաքածուի սեփականատիրոջը մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնի կողմից տրվում է Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուում ընդգրկելու մասին վկայական: Վկայականի ձևը սահմանվում է լիազոր պետական մարմնի կողմից:

5. Ոչ պետական թանգարանային առարկաների ընդգրկումը Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմում իրականացվում է կամավոր սկզբունքով: Ոչ պետական թանգարանի հավատարմագրման դեպքում՝ թանգարանային առարկաների ընդգրկումը Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմում պարտադիր է:

Հոդված 16. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակը

1. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակը կազմված է պետական, համայնքային, հավատարմագրված ոչ պետական թանգարանների և Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուում հաշվառված հավաքածու ունեցող ոչ պետական թանգարանների թանգարանային առարկաներից և հավաքածուներից:

2. Առարկայացուցակում ընդգրկված թանգարանային առարկաների ու հավաքածուների թվայնացված տեղեկույթի ստեղծման, վարման, օգտագործման և տրամադրման կարգը հաստատում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմինը:

Հոդված 17. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակում փոփոխություն կատարելը

1. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմից թանգարանային առարկան հանված է համարվում Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակում այդ մասին նշում կատարելու օրվանից:

2. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի պետական մասում ընդգրկված թանգարանային առարկան կամ հավաքածուն Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակից հանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

3. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի համայնքային մասում ընդգրկված թանգարանային առարկան կամ հավաքածուն Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակից հանվում է տնօրինողի որոշմամբ՝ մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնի դրական եզրակացության հիման վրա:

4. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի ոչ պետական մասում ընդգրկված թանգարանային առարկան կամ հավաքածուն Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակից հանվում է սեփականատիրոջ դիմումի համաձայն:

5. Պետական և համայնքային թանգարանների սեփականություն համարվող մշակութային արժեքները և հավաքածուները հինգ տարին մեկ ենթակա են վերագնահատման, որի ընթացակարգը սահմանում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմինը: Վերագնահատումն իրականացվում է մշակութային, գիտական և գնի որոշման նպատակով:

6.Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակում փոփոխություն կատարվում է թանգարանային առարկաների հետազոտման, դրանց պատմական, գիտական, գեղարվեստական կամ այլ մշակութային նշանակությամբ ձեռք բերված փաստերի ճշգրտման, ինչպես նաև դրանց համակողմանի մեկնաբանման բացահայտման նպատակով՝ մշակույթի բնագավառի լիազոր պետական մարմնի թույլտվությամբ՝ հիմքերի և ժամկետի մասին նշում կատարելով գրանցամատյանում:

Հոդված 18. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկված թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանությունը և ժամանակավոր արտահանումը

1. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկված թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանությունն ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկված թանգարանային առարկաները և հավաքածուները կարող են ժամանակավոր արտահանվել առավելագույնը մեկ տարի ժամկետով:

4. Թանգարանային առարկաների ժամանակավոր արտահանումն իրականացվում է «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» օրենքով և միջազգային պայմանագրերով:

Հոդված 19. Հայաստանի Հանրապետության առանձնակի արժեքավոր և բացառիկ կարևորության թանգարանային հավաքածուի կազմը

1. Հայաստանի Հանրապետության առանձնակի արժեքավոր և բացառիկ կարևորության թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկվում են պետական, համայնքային, հավատարմագրված ոչ պետական թանգարանների և Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուում հաշվառված հավաքածու ունեցող ոչ պետական թանգարանների բացառիկ արժեք ունեցող թանգարանային առարկաները և հավաքածուները: Թանգարանների հավաքածուներից թանգարանային առարկաների և հավաքածուների ընտրության չափորոշիչները, Հայաստանի Հանրապետության առանձնակի արժեքավոր և բացառիկ կարևորության թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկելու կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Ոչ պետական թանգարանների սեփականությունը համարվող բացառիկ արժեք ունեցող առարկաները և հավաքածուները Հայաստանի Հանրապետության առանձնակի արժեքավոր և բացառիկ կարևորության թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկվում են սեփականատիրոջ գրավոր համաձայնությամբ՝ սահմանելով, որ առարկայի օտարման դեպքում Հայաստանի Հանրապետությունն ունի գնման նախապատվություն:

Հոդված 20. Թանգարանների օգտագործումը

1. Թանգարանները գերազանցապես օգտագործվում են գիտական, կրթական, մշակութային, զբոսաշրջային, ժամանցային և բնապահպանական նպատակներով, ինչպես նաև իրենց գործառնական նշանակությամբ:

2. Թանգարանների օգտագործումը տնտեսական նպատակներով թույլատրվում է, եթե այդպիսի օգտագործումը չի հակասում թանգարանի նպատակներին և չի խոչընդոտում բուն գործունեությանը:

3. Պետական թանգարանների օգտագործումը տնտեսական նպատակներով կարող է կազմակերպվել մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնի համաձայնությամբ:

Հոդված 21. Թանգարանային կրթություն

1. Թանգարանային կրթությունը՝ թանգարանի մշակութային ներուժի և այցելուի ինտելեկտուալ-զգայական հաղորդակցումն է որպես ոչ ֆորմալ կրթական փորձառություն:

2. Թանգարանային կրթությունը սահմանում է հետազոտահեն ուղղվածություն ունեցող թանգարանային բովանդակություն, գիտելիքների և հմտությունների ծավալ, որը

հաղորդակցվում է այցելուին և/կամ այցելուների խմբերին տեսական և գործնական տարբեր մեթոդների և աշխատաձևերի միջոցով:

3. Թանգարաններում իրականացվող կրթական ծրագիրը կարող է իրականացվել ֆիզիկական տարածքում և/կամ առցանց:

4. Թանգարանային կրթական ծրագրերը կարող են բաղկացուցիչ մաս կազմել հանրակրթական և մասնագիտական ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերի:

5. Յուրաքանչյուր թանգարան պարտավոր է ունենալ հաստատված կրթական հայեցակարգ, ինչպես նաև գործընթացը համակարգող անձնակազմ:

Հոդված 22. Թանգարանների ձեռնարկատիրական գործունեությունը

1. Թանգարանը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով:

2. Ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է դրա կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

3. Պետական թանգարանների ձեռնարկատիրական գործունեությունը կարող է իրականացվել նաև մշակույթի բնագավառի լիազոր պետական մարմնի կողմից ընտրված կազմակերպության կողմից, եթե այդ լիազորությունը կանոնադրությամբ վերապահված չէ այլ մարմնի:

ԳԼՈՒԽ 4.

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԼԻԱԶՈՐ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՅԼ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԹԱՆԳԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հոդված 23. Թանգարանների ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

1) սահմանում է թանգարանների և Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի պահպանության և օգտագործման ոլորտում պետական քաղաքականության իրականացումը.

2) ապահովում է Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի պետական մասի և Հայաստանի Հանրապետության առանձնակի արժեքավոր և բացառիկ կարևորության թանգարանային հավաքածուի պահպանությունը, համալրումը և օգտագործումը.

3) հաստատում թանգարանների հավատարմագրման կարգն ու չափորոշիչները:

4) ստեղծում է պետական թանգարաններ, արգելոց-թանգարաններ և թանգարան-ինստիտուտներ:

Հոդված 24. Թանգարանների ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի լիազորությունները

1. Լիազոր պետական մարմինը՝

1) հսկողություն է իրականացնում իր ենթակայության պետական թանգարանների գործունեության նկատմամբ.

2) վարում է Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակը (ռեեստրը) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.

3) հաստատում է պետական թանգարանների զարգացման հայեցակարգերը, ծրագրերը, հիմնական ցուցադրության գիտական պլանը և գեղարվեստական նախագծերը.

4) հսկողություն է իրականացնում թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանության կանոնների նկատմամբ՝ մասնագիտական հանձնաժողովների միջոցով.

5) կազմակերպում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բռնագրավված, հօգուտ պետությանը տիրազուրկ ճանաչված և ժառանգության իրավունքով պետությանն անցած, անտնտեսվար պահվող մշակութային արժեքների և հավաքածուների պետական թանգարաններ մշտական պահպանության հանձնումը.

6) սահմանում է թանգարանային առարկաների և հավաքածուների վերականգնման չափանիշները և ապահովում ամրակայումը և վերականգնումը.

7) սահմանում է թանգարանային աշխատողների մասնագիտական որակավորման չափանիշները.

8) սահմանում է իր ենթակայության թանգարանի աշխատողների պաշտոնների օրինակելի նկարագիրը.

9) կազմակերպում է թանգարանի աշխատողների վերապատրաստման, որակավորման բարձրացման, համակարգի զարգացման ծրագրերի մշակումը և դրանց իրականացումը.
10) հաստատում է թանգարանների ֆոնդային-գնահատող հանձնաժողովի աշխատակարգի օրինակելի ձևը.

11) հսկողություն է իրականացնում թանգարաններին ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ, եթե այդ լիազորությունը թանգարանի կանոնադրությամբ վերապահված չէ այլ մարմնի.

12) հաստատում է պետական թանգարանային աշխատողների ատեստավորման կարգի օրինակելի ձևը.
13) հաստատում է պետական թանգարանների, արգելոց-թանգարանների հիմնական ցուցադրության այցելության տոմսերի, մասնագիտական լուսանկարման, տեսագրման, անվճար օգտվողների և թանգարանների կողմից մատուցվող ծառայությունների ցանկերը և սակագները, եթե այդ լիազորությունը թանգարանի կանոնադրությամբ վերապահված չէ այլ մարմնի.
14) հաստատում է արգելոցների, արգելոց-թանգարանների և թանգարանների տարածքները վարձակալության տրամադրելու ընթացակարգը:

15) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ.
16) իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող հայկական մշակութային արժեքների հաշվառման, ուսումնասիրման աշխատանքներ՝ այդ երկրի օրենսդրության, միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում.

17) սահմանում է թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանության և ժամանակավոր պահպանության ընթացակարգը և պայմանակարգը

18) իրականացնում է Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի պահպանության նկատմամբ հսկողություն.

19) հաստատում է թանգարանային առարկաների և հավաքածուների վերականգնողի որակավորման կարգը և չափորոշիչները.

20) հաստատում է ռազմական դրության ժամանակ և արտակարգ իրավիճակում Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուում և Հայաստանի Հանրապետության առանձնակի արժեքավոր և բացառիկ կարևորության թանգարանային հավաքածուում ընդգրկված թանգարանային առարկաների և հավաքածուների տարհանման և դրանց պաշտպանության կարգը.

21) հաստատում է Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակում ընդգրկված թանգարանային առարկաների ու հավաքածուների թվանշայնացված տեղեկույթի ստեղծման, վարման, օգտագործման և տրամադրման կարգը.

22) սահմանում է պետական և համայնքային թանգարանների հավաքածուի հասանելիության ապահովման կարգը.

23) հաստատում է թանգարանային առարկաների և հավաքածուների հաշվառման, պահպանության, անվտանգության, ամրակայման և վերականգնման աշխատանքների իրականացման կարգը.

24) հաստատում է թանգարանային առարկաների և հավաքածուների հաշվառման կարգը:

25) սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական թանգարանային հավաքածուի համալրման կարգը:

Հոդված 25. Թանգարանների ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները

1. Թանգարանային ոլորտում տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքներով սահմանված լիազորությունները:

Հոդված 26. Թանգարանների ոլորտում տարածքային կառավարման և այլ պետական մարմինների լիազորությունները

1. Տարածքային կառավարման և այլ պետական մարմինները՝

1) իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 27. Թանգարանների խորհրդի լիազորությունները

1. Թանգարանների խորհուրդը հասարակական հիմունքներով գործող խորհրդակցական մարմին է, որի նպատակն է թանգարանային գործունեության կազմակերպման հիմնարար հարցերի քննարկումը:

2. Թանգարանների խորհուրդը կազմված է 15 անդամից: Խորհուրդը բաղկացած է մշակույթի բնագավառի լիազոր պետական մարմնի հինգ, զբոսաշրջության բնագավառի լիազոր պետական մարմնի, տարածքային կառավարման բնագավառի լիազոր պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի մեկական ներկայացուցիչներից, ինչպես նաև կարող են ռոտացիոն կարգով ընդգրկվել թանգարանների (անկախ ենթակայությունից և սեփականության ձևից), մշակութային հասարակական կազմակերպությունների մեկական ներկայացուցիչներ, գիտնականներ, մասնագետներ: Ի պաշտոնե խորհրդի նախագահն է մշակույթի բնագավառի լիազոր պետական մարմնի ղեկավարը:

3. Թանգարանների խորհուրդը առաջարկություններ է ներկայացնում բնագավառի լիազոր պետական մարմին՝ թանգարանների գործունեության և գործունեությանը նպաստող պետական ռազմավարության մշակման, թանգարանային քաղաքականության, գիտական ծրագրերի վերաբերյալ:

4. Թանգարանների խորհրդի աշխատակարգը և անհատական կազմը հաստատում մշակույթի բնագավառի լիազոր պետական մարմնը՝ 3 տարի ժամկետով:

Հոդված 28. Թանգարանի աշխատողների իրավունքները և պարտականությունները

1. Թանգարանի աշխատողի իրավունքներ են՝

1) Օրենքով սահմանված կարգով կրթությանը, որակավորմանը և մասնագիտացմանը համապատասխան՝ իրենց իրավասությունների շրջանակներում իրականացնելու թանգարանների բնագավառում մասնագիտական գործունեություն,

2) օրենքով սահմանված կարգով մասնակցելու շարունակական մասնագիտական զարգացման գործընթացին.

3) օրենքով սահմանված կարգով պաշտպանելու իրենց մասնագիտական համբավը, պատիվը և արժանապատվությունը.

4) թանգարանի յուրաքանչյուր աշխատող, առանց որևէ խտրականության, ունի աշխատանքի համար համարժեք վարձատրության իրավունք.

5) թանգարանի աշխատողներն օգտվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սոցիալական ապահովության իրավունքներից և երաշխիքներից .

6) օգտվելու օրենքով սահմանված այլ իրավունքներից:

2. Թանգարանի աշխատողի պարտականություններ են՝

1) իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնել Հայաստանի Հանրապետության թանգարանների բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած մասնագիտական բնութագրին համապատասխան.

2) գործունեության ընթացակարգով կատարել սահմանված պահանջները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում.

3) թանգարանի աշխատողը պարտավոր է պահպանել Հայաստանի Հանրապետության թանգարանի աշխատողի վարքագծի կանոնակարգի պահանջները:

Հոդված 29. Մշակույթի զարգացման հիմնադրամը և դրա նպատակները

1. Մշակութային կազմակերպությունների զարգացման և լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստեղծում է մշակույթի զարգացման հիմնադրամ, որի նպատակները, լիազորությունները և գործունեության ու կառավարման հարցերը սահմանվում է կանոնադրությամբ:

ԳԼՈՒԽ 5.

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 30. Թանգարանների ֆինանսավորումը

1. Պետական թանգարանների ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

2. Համայնքային թանգարանների ֆինանսավորումն իրականացվում է համայնքի բյուջեի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

3. Ոչ պետական թանգարանների ֆինասնավորում է հիմնադրի կողմից և օրենքով չարգելված այլ միջոցներից:

ԳԼՈՒԽ 6.

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 31. Սույն օրենքի խախտման համար պատասխանատվությունը

1. Սույն օրենքի պահանջները խախտող անձինք կրում են Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն:

Հոդված 32. Թանգարանային առարկաներին վնաս պատճառելու դեպքում դրանց վերականգնումն ու վնասի հատուցումը

1. Թանգարանային առարկաների վնասի դեպքում կամ պահպանության կանոնների խախտման արդյունքում վնաս պատճառած քաղաքացիները, թանգարանի աշխատակիցները

և պաշտոնատար անձիք պարտավոր են վերականգնել դրանց նախկին վիճակը սեփական միջոցների հաշվին, իսկ վերականգնելու անհնարինության դեպքում հատուցել պատճառած վնասները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 7.

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 33. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի ուժի մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Հոդված 34. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սահմանել, որ գործող պետական և համայնքային թանգարանները հավատարմագրվում են պարզեցված կարգով, իսկ սահմանված նորմերին չհամապատասխանելու դեպքում՝ կառավարության սահմանած ժամկետներում, բայց տարեկան առնվազն 2 թանգարան համապատասխանեցվում է հավատարմագրման չափանիշներին:

Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-717-20.11.2023,10.01.2024-ԳԿ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է թանգարանների գործունեության հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանում է թանգարանների տեսակները, գործառույթները, Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի ձևավորման, համալրման, հաշվառման, պահպանության, օգտագործման, ~~և~~ անվտանգության, թանգարանների աշխատողների իրավունքների և պարտականությունների, թանգարանային կրթության իրավական հիմքերը:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հասկացությունները.

1) **թանգարան՝** ոչ առևտրային կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որը հավաքում, պահպանում, ուսումնասիրում և հանրայնացնում է նյութական ~~և ոչ նյութական~~ պատմամշակութային ժառանգության առարկաներ ~~(օբյեկտներ)~~և ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքներ.~~։ Այն~~ հասանելի է հանրությանը և ~~և գիտական ու մասնագիտական հենքով է~~ իրականացնում է սոցիալ-մշակութային, գիտահետազոտական, կրթական գործունեություն~~՝ նպաստելով գիտության և կրթության զարգացմանը, հասարակության կենսամակարդակի բարձրացմանը, ժամանցի կազմակերպմանը~~.

2) մշակութային արժեք՝ ~~մշակույթի և արվեստի երկեր, գեղարվեստական ժողովրդական ստեղծագործություններ և արհեստներ, բանահյուսություն, բարոյագիտական և գեղագիտական գաղափարատիպեր (իդեալներ), վարվեցողության կանոններ և ձևեր, լեզուներ, բարբառներ և խոսվածքներ, ազգային ավանդույթներ և սովորույթներ, պատմաաշխարհագրական տեղանուններ, մշակութային գործունեության մասին գիտական հետազոտությունների արդյունքներ և մեթոդներ, մշակութային ժառանգության առարկաներ (օբյեկտներ).~~ մարդկային կենսագործունեության արգասիք համարվող առարկաներ և ստեղծագործություններ, որոնք, անկախ ստեղծման ժամանակից, ունեն հնագիտական, ազգագրական, պատմական, կրոնական, գեղարվեստական, գիտական կարևոր նշանակություն և մշակութային արժեքի կարգավիճակ են ստացել փորձաքննության հիման վրա.

3) թանգարանային առարկա՝ թանգարանային հաշվառում անցած և կարգավիճակ ստացած բնօրինակ մշակութային արժեք կամ գիտական սկզբնաղբյուր, որի հատուկ որակական հատկանիշներն անհրաժեշտ են դարձնում վերջինիս ներառումը թանգարանային հավաքածուի մեջ, մշտական պահպանությունն ու կիրառումը գիտության, կրթության առաջընթացի, ինքնության, արժեհամակարգերի ձևավորման և ~~փոփոխության~~ զարգացման նպատակով.

4) ~~մշակութային~~ թանգարանային նշանակության առարկա՝ ~~մարդկային հասարակության կենսագործունեության արգասիք համարվող առարկաներ, ներառյալ՝ համարանիշային (սերիական) արտադրության կամ զանգվածային արտադրության առարկաներ, ինչպես նաև ստեղծագործություններ, որոնք, անկախ ստեղծման ժամանակից, մշակութային արժեք չեն ներկայացնում և չեն ընդգրկվում թանգարանային հավաքածուի մեջ.~~

Մշակութային նշանակության առարկա, որը կրկնօրինակ է, չի հանդիսանում գիտելիքի և զգայության սկզբնաղբյուր և չունի թանգարանային առարկային բնորոշ հատկանիշներ և որակ, ուստի այն չի ընդգրկվում թանգարանային հավաքածուի հիմնական մասնաբաժնում,

5) թանգարանային առարկաների և հավաքածուների հաշվառում՝ թանգարանային առարկաների և հավաքածուների հաստատված կարգով ~~ու~~

~~հերթական համարանիշներով~~ գրանցում, ուսումնասիրություն և փաստաթղթավորում .

6) թանգարանի գլխավոր մատյան՝ թանգարանային առարկաների և հավաքածուների հաշվառման հիմնական փաստաթուղթ, որը տվյալներ է պարունակում թանգարանային առարկայի և հավաքածուի մասին.

7) **Թանգարանային հավաքածու՝** թանգարանի տիրապետության տակ գտնվող, ~~թանգարանի՝~~ թանգարանային առարկաների հաշվառման գլխավոր մատյանում ներառված թանգարանային ~~բոլոր~~ առարկաների ամբողջություն, որն ունի գիտական, պատմական, գեղարվեստական և մշակութային արժեք:

8) Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածու. մշտապես Հայաստանի Հանրապետության պահպանության ներքո գտնվող, թանգարանների գլխավոր մատյաններում հաշվառված և շարունակաբար համալրվող թանգարանների առարկաների և հավաքածուների ամբողջություն, որն անօտարելի է (բացառության ոչ պետական թանգարանների թանգարանային առարկաների) և Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգության անբաժանելի մասն է .

9) Հայաստանի Հանրապետության առանձնակի արժեքավոր և բացառիկ կարևորության ~~ազգային~~ թանգարանային հավաքածու՝ Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի մաս կազմող բացառիկ թանգարանային առարկաներ, որոնք ենթակա են հաշվառման հատուկ պահպանության համապատասխան պայմանակարգով.

10) Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակ՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմում ներառված յուրաքանչյուր թանգարանային առարկայի և հավաքածուի մասին հիմնական տեղեկություններ պարունակող շտեմարան (ռեեստր), որը ստեղծվում է պետության կողմից մշակութային արժեքների պետական հսկողության նպատակով.

11) թանգարանային առարկայի և հավաքածուի պահպանում, անվտանգության ապահովում՝ թանգարանային առարկայի և հավաքածուի ամբողջության ապահովման համար գիտականորեն հիմնավորված պահպանության հատուկ ռեժիմի ստեղծում, բոլոր տեսակի ռիսկերից պաշտպանում և վտանգների կանխարգելում.

12) թանգարանային առարկայի և հավաքածուի ուսումնասիրում՝ տարբեր թանգարանագիտության բնագավառում ընդունված ~~գիտական~~ մեթոդների կիրառմամբ թանգարանային առարկաների և հավաքածուների բովանդակության բացահայտում, արձանագրում և համակարգում.

13) թանգարանային առարկայի և հավաքածուի հանրայնացում՝ թանգարանային առարկաների և հավաքածուների ներկայացումը հասարակությանը հանրային ցուցադրման, գիտակրթական գործունեության, տպագիր և էլեկտրոնային վերարտադրման եղանակներով.

14) թանգարանի հիմնական ցուցադրություն՝ ~~Թանգարանի~~ թանգարանի հավաքածուից ընտրված թանգարանային առարկաների և դրանց բացահայտման օժանդակ ու աջակցող միջոցներից ~~կազմված~~ ստեղծված ~~առարկայական տարածական թանգարանային~~ հաղորդակցության միջավայր, որը գիտական, գեղարվեստական նախագծման, միջմասնագիտական համագործակցության արդյունքում է ստեղծվում՝ որպես թանգարանային հավաքածուի ~~տևական~~ նպատակային հանրայնացման հիմնական հարթակ և թանգարանի գիտակրթական առաքելության իրականացման առաջնային միջոց.

15) Թանգարանային գործ՝ սոցիալ-մշակութային գործունեության մասնագիտական ոլորտ, որը ներառում է գիտատեսական, մեթոդական գիտելիքների, գործնական հմտությունների, կազմակերպչական-կառավարման օղակների ձևավորում և կիրառում, միջգիտակարգային ու միջմասնագիտական համագործակցություն՝ ուղղված թանգարանային առարկաների և հավաքածուների բացահայտմանը, ձեռքբերմանը, հաշվառմանը, պահպանմանը, ուսումնասիրմանը, հանրայնացմանը, թանգարանների արդյունավետ կառավարմանն ու դրանց հասարակական նշանակության բարձրացմանը, թանգարանային ոլորտի մասնագետների պատրաստմանն ու թանգարանային գործունեության տարբեր ուղղությունների

մեթոդաբանության մշակմանն ու դրանց կատարելագործմանը, թանգարանների արդիականցմանը:

16) **մշակութային արժեքների փորձաքննություն՝** օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվող մշակութաբանական կամ արվեստաբանական հետազոտություն, որի շնորհիվ տրվում է առարկայի մշակութային արժեք համարվելու կամ չհամարվելու վերաբերյալ փորձագիտական եզրակացություն.

17) **թանգարանի հավատարմագրում՝** թանգարանի չափորոշիչներին և ինստիտուցիոնալ հավատարմագրման համապատասխանության ճանաչումն է թանգարանների ոլորտի օրենսդրության դրույթներին՝ դրանց համապատասխանությունը հաստատելու նպատակով.

18) **թանգարանային կրթություն՝** ոչ ֆորմալ ուսումնառություն, որն իրականացվում է թանգարանային գործառույթներ իրականացնող կազմակերպության կողմից և ապահովում է թանգարանային հավաքածուների զգայական և ճանաչողական հաղորդակցումը և մեկնաբանությունը.

19) արգելոց-թանգարան՝ բացօթյա թանգարանի տեսակ կամ մշակութային համալիր կազմակերպություն, որը ստեղծվել է մշակութային ժառանգության թանգարանացման իրագործման համար հնագույն ժամանակներում պատմականորեն ձևավորված տարածքների վրա հստակ տեղայնացված հուշարձանների սահմաններում՝ ապահովելու վերջինիս հնագիտական, մշակութային և բնական ամբողջական արժեքների պահպանությունը, հետազոտումը և հանրահռչակումը:

Հոդված 3. Թանգարանների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

1. Թանգարանների և Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Մշակութային օրենսդրության

հիմունքների մասին», «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին», «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Հիմնադրամների մասին», «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

~~Թանգարանների և Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենքով, սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:~~

ԳԼՈՒԽ 2.

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ, ԹԱՆԳԱՐԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ~~, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ~~ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ՀԱՄԱԼՐՈՒՄԸ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ, ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ, ՕՏԱՐՈՒՄԸ ՈՒ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆՈՒՄԸ

Հոդված 4. Թանգարանների տեսակները

1. Թանգարանները կարող են լինել պետական, ոչ պետական և համայնքային և ունենալ օրենքով չարգելված ցանակացած ոչ առևտրային կազմակերպաիրավական ձև:

~~Ըստ սեփականության ձևի՝ թանգարանները լինում են՝~~

~~1) պետական թանգարաններ՝ հիմնադրված Հայաստանի Հանրապետության կողմից՝ ի դեմս կառավարության,~~

~~2) համայնքային թանգարաններ՝ հիմնադրված տեղական ինքնակառավարման մարմինների կողմից,~~

~~3) ոչ պետական թանգարաններ՝ հիմնադրված իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից:~~

2. Թանգարանի գործունեության և թանգարանային առարկաների ու հավաքածուի բնույթով պայմանավորված թանգարանների լինում են հետևյալ տեսակների ~~Թանգարանները ըստ հավաքածուի բնույթի լինում են~~՝

1) պատմության թանգարաններ, ~~որոնք~~ որոնց հավաքածուն ներառում ~~են~~ է երկրի, ազգի, ժողովրդի, մարզի որևէ պատմական ժամանակաշրջանին կամ իրադարձությանը վերաբերող թանգարանային առարկաներ ու հավաքածուներ, որոնք դասակարգվում են հնագիտական, ազգագրական, երկրագիտական, գրականության և ճարտարապետության, պատմության ~~թանգարան~~ների ~~և այլն)~~.

2) արվեստի թանգարաններ, ~~որոնք~~ որոնց հավաքածուն ներառում ~~են~~ է համաշխարհային և ազգային կերպարվեստի նմուշներ, որոնք դասակարգվում են պատկերասրահ, ժամանակակից արվեստի, դեկորատիվ-կիրառական արվեստի, ժողովրդական արվեստի, լուսանկարչական արվեստի թանգարաններ ~~և այլն~~).

3) բնագիտական թանգարաններ, որոնք ներառում են երկրաբանական, բուսական և կենդանական աշխարհի նմուշներ, հնէաբանական գտածոներ, տեխնիկայի առաջընթացը ներկայացնող առարկաներ և այլ վավերագրեր, որոնք դասակարգվում են բնության, երկրաբանության, բժշկության, տիեզերքի, կապի, տեխնիկայի թանգարանների ~~և այլն)~~.

4) հուշային թանգարաններ, որոնք ներառում են մեկ կամ մի քանի անձանց նվիրված թանգարանային առարկաներ և հավաքածուներ~~, (տուն թանգարաններ, հուշաթանգարաններ և այլն)~~

5) Արգելոց-թանգարան՝ հուշարձանախմբի հենքի վրա ստեղծված բացօթյա թանգարան՝ նրա պատմական, գիտական, գեղարվեստական արժեք ունեցող մշակութային ժառանգության ամբողջական պահպանության և հանրահռչակման նպատակով.

5б) թանգարան-ինստիտուտներ, որոնք գիտահետազոտական գործունեությանը զուգահեռ իրականացնում են թանգարանային գործառույթներ, ունեն թանգարանին բնորոշ հավաքածու: ցուցադրություններին զուգահեռ թանգարանագիտության բնագավառում իրականացնում են ծրագրեր և հետազոտություններ,

6է) կազմակերպության պատմությանը և գործունեությանը նվիրված թանգարաններ որոշակի կազմակերպության պատմությանը կամ գործունեությանը նվիրված:

3. Թանգարանների դասակարգումը ըստ հավաքածուի բնույթի կատարվում է համապատասխան չափորոշիչների՝ մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնին կից գործող թանգարանային խորհրդի եզրակացության հիման վրա՝ մշակույթի բնագավառի լիազոր պետական մարմնի սահմանած կարգով:

4. Սույն օրենքը չի արգելում «թանգարան» բառի օգտագործումը այլ կազմակերպական իրավական ձև ունեցող իրավաբանական անձանց անվանման մեջ եթե իրականացնում են թանգարանային հավաքածուների ուսումնասիրման և հանրահռչակման գործունեություն:

Հոդված 5. Թանգարանի գործունեության նպատակները և գործառույթները

1. Թանգարանի գործունեության նպատակներն են.

1) բնության, նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությունը և փոխանցումը սերունդներին.

2) գիտականորեն համակարգված, հաշվառված թանգարանային առարկաների և հավաքածուների ձևավորումը.

3) ազգային արժեհամակարգի և քաղաքացիական հասարակության ձևավորմանը նպաստելը:

4) հասարակության գեղագիտական ժամանցի և մշակութային կրթության իրավունքի ապահովումը:

2. Թանգարանի գործառույթներն են.

1)~~,~~ թանգարանային առարկաների և հավաքածուների հավաքումը, համալրումը, հաշվառումը, ~~պահպանումը~~ պահպանությունը և ~~պաշտպանումը~~պաշտպանությունը,

2) թանգարանային առարկաների և հավաքածուների դասակարգումը, հետազոտումը, հրատարակումը և թվայնացումը,

3) թանգարանային առարկաների և հավաքածուների հանրայնացումը (ցուցադրում, հրապարակում),

~~4) ճանաչողական և մշակութային ծրագրերի իրականացումը,~~

~~5~~4) ~~գիտակրթական~~ գիտահետազոտական և կրթամշակութային ծառայությունների մատուցումը:

~~4~~5~~) ճանաչողական և~~ մշակութային, զբոսաշրջային և ժամանցային ~~ծրագրերի~~ իրականացումը,

6) թանգարանագիտության բնագավառում հետազոտությունների իրականացումը:Հոդված 6. Թանգարանի հավատարմագրման չափորոշիչները.

1. Թանգարանը կամ թանգարանի կարգավիճակ ստանալու ցանկություն ունեցող ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, անկախ հիմնադրից և կազմակերպաիրավական ձևից կարող է հավատարմագրվել: Թանգարանների հավատարմագրումն իրականացնում է մշակույթի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը՝ մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

2. Հավատարմագրումն իրականացվում է հետևյալ չափորոշիչների առկայության դեպքում.

1) տիրապետում է թանգարանին բնորոշ մշակութային արժեքների հավաքածուի և իրականացնում է հիշյալ հավաքածուների ուսումնասիրություն, հաշվառում, պահպանություն, համալրում և հանրայնացում՝ ըստ մշակույթի բնագավառում լիազոր մարմնի կողմից հաստատված պայմանակարգերի.
2) տնօրինում է թանգարանի գործունեության իրականացման համար անհրաժեշտ տարածքներ, թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանման և ցուցադրման պահանջներին համապատասխան նյութատեխնիկական բազա, թանգարանային առարկաների ջերմախոնավային ռեժիմով և անվտանգության միջոցներով, թանգարանային տարածքների և ցուցասրահների հասնելիությունը և խելամիտ հարմարեցումը.
3) ունի մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնի սահմանած թանգարանային աշխատողների մասնագիտական որակավորման չափանիշերին համապատասխան որակավորված անձնակազմ:
4) թանգարանի գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայությունը կամ դրանց մուտքերի աղբյուրը:

3. Սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված չափանիշների առկայության դեպքում տրվում է հավատարմագրված թանգարանի կարգավիճակ 10 ժամկետով վերահավատարմագրման հնարավորությամբ:

4. Հավատարմագրված ոչ պետական թանգարանների նկատմամբ մշակույթի բնագավառում լիազորվ մարմինը իրականացնում է մշտադիտարկում:

Հոդված 7. Թանգարանային առարկաների և հավաքածուների հաշվառում

~~Հոդված 6. Թանգարանի առարկաների և հավաքածուների հաշվառում~~

1. Թանգարանի կողմից թանգարանային~~, մշակութային~~ առարկաները և հավաքածուները ենթակա են հաշվառման: Դրանց հաշվառման կարգը հաստատում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմինը:

2. Պետական և համայնքային թանգարանների հավաքածուներում հաշվառված պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող թանգարանային առարկաները և հավաքածուները հիմնադրի կողմից ամրացվում են թանգարանին որոշակի ժամկետով կամ անժամկետ՝ անհատույց օգտագործման իրավունքով:

3. Պետական և համայնքային թանգարանի գործունեության դադարեցման դեպքում թանգարանի հաշվառած թանգարանային, մշակութային առարկաներն ու հավաքածուները հիմնադրի կողմից ամրացվում են այլ պետական կամ համայնքային թանգարանի:

4. Պետական թանգարանի կողմից հաշվառված թանգարանային հավաքածուները բաժանման (մասնատման) ենթակա չեն:

5. Հավատարմագրված ոչ պետական թանգարանի կամ Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուում հաշվառված հավաքածու ունեցող ոչ պետական թանգարանի թանգարանի գործունեության դադարեցման դեպքում ~~թանգարանի~~ թանգարանային ~~առարկաներն~~ առարկաներն ու հավաքածուները տնօրինվում են հիմնադրի կողմից՝ տեղեկացնելով մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնին:

Հոդված ~~7~~8. Թանգարանի հավաքածուի ձևավորումը և համալրումը

1. Թանգարանի հավաքածուն ձևավորվում է մեկ կամ մի քանի թեմայի (կամ գաղափարի) շուրջ՝ ըստ անհրաժեշտության համալրվող թանգարանային առարկաների և հավաքածուների հիման վրա:

2. Պետական թանգարանի հավաքածուն համալրվում է օրենքով չարգելված միջոցներով՝ թանգարանի նպատակներին ~~առաքելությանը~~ և համալրման ռազմավարությանը համապատասխան, որը հաստատում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմինը, եթե այդ լիազորությունը թանգարանի կանոնադրությամբ վերապահված չէ այլ մարմնի:

3. Պետական և համայնքային թանգարանի ղեկավարը իր հավաքածուների համալրման գործընթացը կազմակերպելու նպատակով ստեղծում է ֆոնդային-գնահատող հանձնաժողով, որի ձևավորման և գործունեության կարգը ~~աշխատակարգի օրինակելի ձևը~~ հաստատում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմինը:

Հոդված ~~8~~9. Պետական և համայնքային թանգարանի հավաքածուի համալրման հիմնական եղանակները

1. Պետական կամ համայնքային թանգարանների թանգարանային հավաքածուները համալրվում են հետևյալ եղանակներով.

1) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից թանգարանին թանգարանային առարկայի ամրացում,

2) թանգարանի կողմից գնում,

3) նվիրատվության ստացում,

4) հնագիտական պեղումներ իրականացնող անձի կամ կազմակերպության կողմից հայտնաբերված գտածոների անհատույց ստացում,

5) պետական բյուջեով և օրենքով չարգելված այլ եղանակներով:

6) աճուրդների միջոցով:

2. Ոչ պետական թանգարանների թանգարանային հավաքածունները համալրվում են հիմնադրի կողմից՝ օրենքով չարգելված եղանակներով:

Հոդված ~~9~~10. ~~Թանգարանի թ~~Թանգարանային~~, մշակութային~~ առարկաների և հավաքածուների պահպանությունը և անվտանգության ապահովումը

1. ~~Թանգարանի թ~~Թանգարանային~~, մշակութային~~ առարկաները և հավաքածուները ~~վերցվում~~ ենթակա են մշտական պահպանության:

2. ~~Թանգարանի~~ Թթանգարանային~~, մշակութային~~ առարկաների և հավաքածուների պահպանությունն ապահովելու համար թանգարաններում սահմանվում է պայմանակարգ և պարբերաբար կամ ըստ անհրաժեշտության իրականացվում է թանգարանային առարկաների և հավաքածուների ամրակայում և վերականգնում՝ ամրակայման և վերականգնման միջազգային չափանիշներին համապատասխան:

3. Թանգարանի թանգարանային առարկաների և հավաքածուների ամրակայման և վերականգնման ~~աշխատանքները~~ աշխատանքներն իրականացնում է համապատասխան որակավորում ունեցող մասնագետը (վերականգնողը):

~~4. Թանգարանի ղեկավարը պարտավոր է ապահովել թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանությունն ու անվտանգությունը:~~

Հոդված ~~10~~11. Թանգարանային առարկաների և հավաքածուների ժամանակավոր պահպանությունը

1. Թանգարանները կարող են պայմանագրի հիման վրա՝ վճարովի կամ անվճար հիմունքներով իրականացնել թանգարանային առարկաների և հավաքածուների ժամանակավոր պահպանություն՝ դրանք չընդգրկելով տվյալ թանգարանի գլխավոր մատյանում:

2. Պետական և համայնքային թանգարանները թանգարանային առարկաները և հավաքածուները կարող են ժամանակավոր պահպանության հանձնել այլ թանգարանների կամ կազմակերպությունների՝ պայմանագրի հիման վրա առավելագույնը 3 տար~~ով~~ի ժամկետով ~~լիազոր մարմնի համաձայնությամբ~~՝ պայմանով, որ ապահովվի թանգարանային առարկաների տեղափոխման, ցուցադրման և պահպանման համար անհրաժեշտ անվտանգությունը, ջերմախոնավային ռեժիմը, հասանելիությունը և համահունչ լինի թանգարանային առարկայի միջավայրին: Սահմանված նորմերի համապատասխանությունը գնահատում և հետագայում դիտարկում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմինը: Սահմանված նորմերի անհամապատասխանությունըհիմք է ժամանակավոր պահպանության հանձնելու հարցը մերժելու համար:

3. Պետական թանգարանի թանգարանային առարկայի կամ հավաքածուի ժամանակավոր պահպանության հանձնումն իրականացվում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնի որոշմամբ, իսկ համայնքային թանգարանի թանգարանային առարկայի կամ հավաքածուի ժամանակավոր պահպանության հանձնումը՝ մասնագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա համայնքի ավագանու որոշմամբ:

4. Պետական և համայնքային թանգարանի թանգարանային ~~և մշակութային~~ առարկաները արարողակարգային և աշխատասենյակներիի ներքին ձևավորման նպատակով՝ ~~տրամադրվում~~ ժամանակավոր պահպանության են հանձնվում~~են~~ միայն

Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին, փոխվարչապետի գրասենյակին և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը նստավայրերում ցուցադրության նպատակով՝ պայմանով, որ ապահովվի թանգարանային առարկաների տեղափոխության, ցուցադրության և պահպանությունը և ջերմախոնավային ռեժիմը ան պայմանակարգը, դրանց անվտանգությունը:

Հոդված 11 12. Թանգարանային առարկաների և հավաքածուների մատչելիության ապահովումը և հանրայնացման (հրապարակման) իրավունքը

1. Թանգարանային առարկաները և հավաքածուները հասանելի են հանրության համար՝ բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

2. Հայաստանի Հանրապետության **առանձնակի արժեքավոր և բացառիկ կարևորության** ազգային թանգարանային հավաքածույում ընդգրկված թանգարանային և մշակութային արժեք ներկայացնող առարկաների վերաբերյալ տեղեկությունները կարող են տրամադրվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի պաշտպանության նպատակով:

3. Թանգարանից օգտվողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են թանգարանների ներքին կանոնակարգով: Թանգարանների ներքին կանոնակարգի օրինակելի ձևը հաստատում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմինը:

4. Պետական Թթանգարանի գույքամատյանը հասանելի է միայն թանգարանի ղեկավարին և գլխավոր ավանդապահին (ֆոնդապահ): Բացառիկ դեպքերում, գլխավոր մատյանին հասանելիություն թույլատրվում է մշակույթի բնագավառի լիազոր պետական մարմնի կողմից կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտի հիման վրա: Գլխավոր մատյանին հասանելիություն թույլատրում է լիազոր

~~պետական մարմի կողմից:~~ Գույքամատյանում գրանցումներ կատարում է միայն թանգարանի գլխավոր ավանդապահը:

5. Թանգարանային առարկաների և հավաքածուների հասանելիությունը կարող է սահմանափակվել՝

1) դրանց պահպանվածության ոչ բավարար վիճակի դեպքերում,

2) դրանց վերականգնման ընթացքում լինելու դեպքում:

3) որոշակի անվտանգային նկատառումներից ելնելով:

6. Բացառությամբ «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» օրենքով նախատեսված դեպքերի՝ թանգարանային առարկաների և հավաքածուների, թանգարանի շենքերի կամ նրա համալիրի մասերի գծապատկերները, տեսապատկերները, կրկնօրինակները և դրանց վերաբերյալ տեղեկույթը գովազդային նպատակով, որպես խորհրդանիշ՝ հուշանվերների կամ այլ ապրանքների արտադրության համար տրամադրելը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կատարվում է պետական և համայնքային թանգարանների դեպքում լիազոր մարմնի համաձայնությամբ, իսկ ոչ պետական թանգարանների դեպքում՝ սեփականատիրոջ կամ գործադիր մարմնի ղեկավարի թույլտվությամբ:

7. Այն թանգարանային շենքերը, որոնք պատմամշակութային հուշարձաններ են, երրորդ անձանց կողմից դրանց ֆոտոպատկերները, տեսապատկերները կամ գծապատկերները գովազդային նպատակով որպես խորհրդանիշ, պիտակ, հուշանվերների և այլ ապրանքների արտադրության համար օգտագործելը կատարվում է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքով սահմանված կարգով:

8. Արգելվում է թանգարանին հանձնված շենքերում և տարածքներում իրականացնել այնպիսի գործունեություն, որը կարող է վտանգել թանգարանային առարկաները և հավաքածուն կամ հակասում է թանգարանի օգտագործման նպատակներին:

9. Արգելվում է թանգարանների օգտագործումը քաղաքական գործունեության նպատակներով:

Հոդված ~~12~~13. Թանգարանային առարկաների և հավաքածուների օտարումը, ~~նվիրատվությունն~~նվիրատվությունը, հաշվառումից հանելը ~~ու~~ և փոխանակումը

1. Պետական կամ համայնքի սեփականությունը հանդիսացող թանգարանային առարկան կամ հավաքածուն օտարման ենթակա չէ: Արգելվում է Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի մեջ ընդգրկված թանգարանային առարկաների կամ դրանց առանձին մասերի (պատկանելիքների) օտարումը կամ օգտագործումը որպես պարտավորությունների կատարման ապահովման միջոց, պարտքը մարելու միջոց կամ գրավի առարկա, դրանց օտարման վերաբերյալ չեն կարող կնքվել գործարքներ:

~~Պետական կամ համայնքի սեփականությունը հանդիսացող թանգարանային առարկան կամ հավաքածուն օտարման ենթակա չէ: Թանգարանային առարկաները չեն կարող օգտագործվել որպես պարտքը մարելու միջոց կամ գրավի առարկա, ինչպես նաև օտարման վերաբերյալ չեն կարող կնքվել գործարքներ:~~

2. Արգելվում է պետական սեփականություն համարվող և թանգարանային հավաքածուներում հաշվառված թանգարանային առարկաների նվիրատվությունը:

3. Պետական, համայնքի սեփականությունը հանդիսացող թանգարանային առարկաների փոխանակումը թույլատրվում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում , եթե համաձայն մշակութաբանական և արվեստաբանական փորձաքննության եզրակացության, փոխանակվող առարկան համարժեք է թանգարանային այլ առարկայի: Փորձագիտական եզրակացությունը տրամադրվում է, եթե համաձայն մշակութաբանական և արվեստաբանական փորձաքննության եզրակացության, փոխանակվող առարկան համարժեք է թանգարանային այլ առարկայի: Փորձագիտական եզրակացությունը տրամադրվում է համապատասխան

գործունեություն իրականացնող հավատարմագրված կազմակերպությունը: ~~Պետական կամ համայնքի սեփականությունը հանդիսացող թանգարանային առարկան կարող է փոխանակվել թանգարանային համարժեք այլ առարկայով թանգարանի միջնորդությամբ՝ մշակութաբանական և արվեստաբանական փորձաքննության եզրակացության հիման վրա, որը տրամադրվում է համապատասխան գործունեություն իրականացնող կազմակերպության կողմից:~~

4. Պետական թանգարանի թանգարանային առարկայի փոխանակումը իրականացվում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնի ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, իսկ համայնքային թանգարանի թանգարանային առարկայի փոխանակումը՝ համայնքի ավագանու որոշմամբ համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնի փորձագիտական դրական եզրակացության հիման վրա ~~տեղեկացմամբ~~:

5. Պետական կամ համայնքի սեփականությունը հանդիսացող թանգարանային առարկան կամ հավաքածուն թանգարանի հավաքածուի հաշվառումից կարող են հանվել՝

1) թանգարանային առարկայի կամ հավաքածուի ոչնչացման (քայքայման) դեպքում՝ մշակութաբանական և արվեստաբանական անկախ փորձաքննության եզրակացու թյան հիման վրա (բացառությամբ բնագիտական թանգարանների),

2) ~~թանգարանային առարկայի կամ հավաքածուի՝~~ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ~~դատարանի որոշմամբ նախկին տիրապետողին վերադարձնելու դեպքում~~,

3) թանգարանային առարկայի կամ հավաքածուի փոխանակման և մեկ այլ թանգարանի փոխանցելու դեպքում

4) երբ այն այլևս գոյություն չունի կամ կորցրել է իր մշակութային և գիտական արժեքը:

÷

6. Պետական սեփականություն համարվող թանգարանային առարկան կամ հավաքածուն (բացառությամբ բնագիտական թանգարանների) հաշվառումից հանվում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնի ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, իսկ համայնքային թանգարանի թանգարանային առարկան՝ ~~կամ հավաքածուն~~՝ համայնքի ավագանու որոշմամբ համայնքի ղեկավարի ներկայացմամբ մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնի դրական եզրակացության հիման վրա՝ ~~լիազոր պետական մարմնի տեղեկացմամբ~~:

7. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող թանգարանային հավաքածուներից կորած (գտնվելու վայրը անհայտ) առարկաները չեն կարող հանվել հաշվառումից և մնում են հաշվառված:

~~8. Ոչ պետական թանգարանի թանգարանային, մշակութային առարկաները և հավաքածուները կարող են օտարվել սեփականատիրոջ կամ հիմնադրի որոշմամբ:~~

9. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի մեջ ընդգրկված հավատարմագրված ոչ պետական թանգարանի կամ Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուում հաշվառված հավաքածու ունեցող ոչ պետական թանգարանի ~~ոչ պետական թանգարանի~~ թանգարանային առարկաները և հավաքածուները (ամբողջական կամ առանձին) կարող են հանվել հաշվառումից սեփականատիրոջ կամ հիմնադրի որոշմամբ ~~օտարվել~~՝ այդ մասին նախապես գրավոր տեղեկացնելով մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնին: ~~Օտարման մասին տեղեկություն չհայտնելու դեպքում թանգարանային առարկան և հավաքածուն չեն հանվում Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուից:~~

~~10. Արգելվում է Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի մեջ ընդգրկված թանգարանային առարկաների կամ դրանց առանձին մասերի (պատկանելիքների) օտարումը կամ օգտագործումը՝ որպես պարտավորությունների կատարման ապահովման միջոց:~~

ԳԼՈՒԽ 3.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ԱՌԱՐԿԱՅԱՑՈՒՑԱԿԸ, ԱՌԱՐԿԱՅԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԻ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԵՎ ԲԱՑԱՌԻԿ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ ~~ԱԶԳԱՅԻՆ~~ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ԿԱԶՄԸ, ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ, ~~ԵՎ~~ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված ~~13~~14. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուն՝ որպես Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգության բաղկացուցիչ մաս

1. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուն Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգության բաղկացուցիչ, անբաժանելի մասն է:

2. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակը (ռեեստրը) վարում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմինը:

3. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի մասին կանոնակարգը և Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածույում թանգարանային առարկաները և հավաքածուները ընդգրկելու և հանելու կարգը հաստատում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմինը:

4. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի պետական մասում ընդգրկված, պետական թանգարանների ~~հիմնական~~ հավաքածուներում ընդգրկված և համայնքներին հանձնված թանգարանային առարկաները, հավաքածուները համարվում են Հայաստանի Հանրապետության սեփականությունը, որի կառավարումն իրականացնում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմինը:

5. Պետական և համայնքային թանգարանների վերակազմակերպումից և գործունեության դադարեցումից հետո Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածույում ընդգրկված թանգարանային առարկաները և հավաքածուները մնում են Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուում:՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով Վերակազմակերպված և գործունեությունը դադարեցված թանգարանների՝ թանգարանային առարկաների հետագա տնօրինման և պահպանության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:՝:

Հոդված 1415. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմը և այդ կազմում թանգարանների հավաքածուների ընդգրկումը

1. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուն կազմված է պետական, համայնքային, հավատարմագրված ոչ պետական թանգարանների և Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուում հաշվառված ոչ պետական թանգարանների թանգարանային առարկաներից և հավաքածուներից:

Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուն կազմված է պետական, համայնքային և ոչ պետական թանգարանների հավաքածույում ընդգրկված թանգարանային առարկաներից և հավաքածուներից:

2. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի համայնքային մասն են կազմում այն թանգարանների հիմնական հավաքածուներում ընդգրկված թանգարանային առարկաները և հավաքածուները, որոնց որոնք հիմնադիրն է հանդիսանում սեփականության իրավունքով պատկանում են համայնքըհամայնքին:

3. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմը համալրվում է Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի մասին կանոնակարգին համապատասխան թանգարանների հավաքածուի առարկայացուցակում գրանցվելու պահից:

4. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածույում ընդգրկված թանգարանի հավաքածուի սեփականատիրոջը մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնի կողմից տրվում է Հայաստանի Հանրապետության

թանգարանային հավաքածուում ընդգրկելու մասին վկայական: Վկայականի ձևը սահմանվում է լիազոր պետական մարմնի կողմից:

5. Ոչ պետական թանգարանային առարկաների ընդգրկումը Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմում իրականացվում է կամավոր սկզբունքով: Ոչ պետական թանգարանի հավատարմագրման դեպքում՝ թանգարանային առարկաների ընդգրկումը Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկումը պարտադիր է:

~~Ոչ պետական թանգարանային առարկաների ընդգրկումը Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմում իրականացվում է կամավոր սկզբունքով:~~

Հոդված ~~15~~16. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակը

1. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակը կազմված է պետական, համայնքային, ~~և~~ հավատարմագրված ոչ պետական թանգարանների և Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուում հաշվառված հավաքածու ունեցող ոչ պետական թանգարանների ~~հավաքածուներում ընդգրկված~~ թանգարանային առարկաներից և հավաքածուներից:

2. Առարկայացուցակում ընդգրկված թանգարանային առարկաների ու հավաքածուների թվանշայնացված տեղեկույթի ստեղծման, վարման, օգտագործման և տրամադրման կարգը հաստատում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմինը:

Հոդված ~~16~~17. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակում փոփոխություն կատարելը

1. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմից թանգարանային առարկան հանված է համարվում Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակում այդ մասին նշում կատարելու օրվանից:

2. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի պետական ~~մասում~~մասում—ընդգրկված թանգարանային առարկան կամ հավաքածուն Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակից հանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

÷

~~3~~3. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի համայնքային մասում ընդգրկված թանգարանային առարկան կամ հավաքածուն Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակից հանվում է տնորինողի որոշմամբ՝ մշակույթի բնագավառում լիազորվ պետական մարմնի դրական եզրակացության հիման վրա:

~~Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի համայնքային մասում ընդգրկված թանգարանային առարկան կամ հավաքածուն Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակից հանվում է համայնքի ավագանու որոշմամբ՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ, որի օրինակը ներկայացվում է լիազոր պետական մարմին Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակում համապատասխան փոփոխություն կատարելու համար:~~

—4. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի ոչ պետական մասում ընդգրկված թանգարանային առարկան կամ հավաքածուն Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակից հանվում է սեփականատիրոջ դիմումի համաձայն:

~~5~~5. Պետական և համայնքային թանգարանների սեփականություն համարվող մշակութային արժեքները և հավաքածուները հինգ տարին մեկ ենթակա են վերագնահատման, որի ընթացակարգը սահմանվում է մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնի որոշմամբ: Վերագնահատումն իրականացվում է մշակութային, գիտական և գնի որոշման նպատակով:

~~Պետական ու համայնքային սեփականություն համարվող մշակութային արժեքները և հավաքածուները երեք տարին մեկ ենթակա են վերագնահատման, որի ընթացակարգը սահմանվում է լիազոր պետական մարմնի որոշմամբ:~~

6. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակում փոփոխություն կատարվում է թանգարանային առարկաների հետազոտման, դրանց պատմական, գիտական, գեղարվեստական կամ այլ մշակութային նշանակությամբ ձեռք բերված փաստերի ճշգրտման, ինչպես նաև դրանց համակողմանի մեկնաբանման բացահայտման նպատակով՝ մշակույթի բնագավառի լիազոր պետական մարմնի թույլտվությամբ՝ հիմքերի և ժամկետի մասին նշում կատարելով գրանցամատյանում:

Հոդված ~~17~~18. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկված թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանությունը և ժամանակավոր արտահանումը

1. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկված թանգարանային առարկաների և հավաքածուների ~~պահպանությունը~~ պահպանությունն ապահովում է Հայաստանի ~~Հանրապետությունը~~Հանրապետության կառավարությունը:

2. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկված թանգարանային առարկաները և հավաքածուները կարող են ժամանակավոր արտահանվել առավելագույնը մեկ տարի ժամկետով: ~~Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկված թանգարանային առարկաները և հավաքածուները ենթակա չեն մշտական արտահանման Հայաստանի Հանրապետության տարածքից:~~

~~3. Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկված թանգարանային առարկաների ժամանակավոր արտահանման առավելագույն ժամկետը 1 տարի է՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված դեպքերի:~~

4. Թանգարանային առարկաների ժամանակավոր ~~արտահանումը~~ արտահանումն իրականացվում է «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» օրենքով և միջազգային պայմանագրերով:

Հոդված ~~18~~19. Հայաստանի Հանրապետության առանձնակի արժեքավոր և բացառիկ կարևորության ~~ազգային~~ թանգարանային հավաքածուի կազմը

1. Հայաստանի Հանրապետության առանձնակի արժեքավոր և բացառիկ կարևորության թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկվում են պետական, համայնքային, հավատարմագրված ոչ պետական թանգարանների և Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուում հաշվառված հավաքածու ունեցող ոչ պետական թանգարանների բացառիկ արժեք ունեցող թանգարանային առարկաները և հավաքածուները: Թանգարանների հավաքածուներից բացառիկ արժեք ունեցող թանգարանային առարկաների և հավաքածուների ընտրության չափորոշիչները, Հայաստանի Հանրապետության առանձնակի արժեքավոր և բացառիկ կարևորության թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկելու կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

~~Հայաստանի Հանրապետության ազգային թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկվում են պետական, համայնքային թանգարանների բացառիկ արժեք ունեցող թանգարանային առարկաները և հավաքածուները: Թանգարանների հավաքածուներից բացառիկ արժեք ունեցող թանգարանային առարկաների և հավաքածուների ընտրության չափորոշիչները, Հայաստանի Հանրապետության ազգային թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկելու կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

2. Ոչ պետական թանգարանների սեփականությունը համարվող՝ բացառիկ արժեք ունեցող առարկաները և հավաքածուները, Հայաստանի Հանրապետության առանձնակի արժեքավոր և բացառիկ կարևորության թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկվում են սեփականատիրոջ գրավոր համաձայնությամբ՝ սահմանելով, որ առարկայի օտարման դեպքում Հայաստանի Հանրապետությունը ունի գնման նախապատվություն:

~~2. Ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականությունը համարվող՝ բացառիկ արժեք ունեցող առարկաները և հավաքածուները, Հայաստանի Հանրապետության ազգային թանգարանային հավաքածուի կազմում կարող են ընդգրկվել սեփականատիրոջ գրավոր համաձայնությամբ:~~

~~3. Հայաստանի Հանրապետության ազգային թանգարանային հավաքածուի կազմում ընդգրկված թանգարանային առարկաները և հավաքածուները ենթակա չեն մասնավորեցման (սեփականաշնորհման), վաճառքի, փոխանակության, նվիրատվության, նվիրաբերության, ինչպես նաև չեն կարող դառնալ այլ գործարքի առարկա:~~

Հոդված ~~19~~20. Թանգարանների օգտագործումը

1. Թանգարանները գերազանցապես օգտագործվում են գիտական, կրթական, մշակութային, զբոսաշրջային, ժամանցային և բնապահպանական նպատակներով, ինչպես նաև իրենց գործառնական նշանակությամբ:

2. Թանգարանների օգտագործումը տնտեսական նպատակներով թույլատրվում է լիազոր պետական մարմնի համաձայնությամբ, եթե այդպիսի օգտագործումը չի ~~խոչընդոտում~~ հակասում ~~բուն~~ թանգարանի ~~գործունեությանը~~ նպատակներին և չի խոչընդոտում բուն գործունեությանը:

3. Պետական թանգարանների օգտագործումը տնտեսական նպատակներով կարող է կազմակերպվել մշակույթի բնագավառում լիազոր պետական մարմնի համաձայնությամբ:

Հոդված 21. Թանգարանային կրթություն

1. Թանգարանային կրթությունը՝ թանգարանի մշակութային ներուժի և այցելուի ինտելեկտուալ-զգայական հաղորդակցումն է որպես ոչ ֆորմալ կրթական փորձառություն:

2. Թանգարանային կրթությունը սահմանում է հետազոտահեն ուղղվածություն ունեցող թանգարանային բովանդակություն, գիտելիքների և հմտությունների ծավալ, որը հաղորդակցվում է այցելուին և/կամ այցելուների խմբերին տեսական և գործնական տարբեր մեթոդների և աշխատաձևերի միջոցով:

3. Թանգարաններում իրականացվող կրթական ծրագիրը կարող է իրականացվել ֆիզիկական տարածքում և/կամ առցանց:

4. Թանգարանային կրթական ծրագրերը կարող են բաղկացուցիչ մաս կազմել հանրակրթական և մասնագիտական ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերի:

5. Յուրաքանչյուր թանգարան պարտավոր է ունենալ հաստատված կրթական հայեցակարգ, ինչպես նաև գործընթացը համակարգող անձնակազմ:

Հոդված ~~20~~22. Թանգարանների ձեռնարկատիրական գործունեությունը

1. Թանգարանը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով:

2. Ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է դրա կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

3. Պետական թանգարանների ձեռնարկատիրական գործունեությունը կարող է իրականացվել նաև մշակույթի բնագավառի լիազոր պետական մարմնի կողմից ընտրված կազմակերպության կողմից, եթե այդ լիազորությունը կանոնադրությամբ վերապահված չէ այլ մարմնի:

ԳԼՈՒԽ 4.

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ~~ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ~~ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԼԻԱԶՈՐ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՅԼ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ~~ՈՒ~~ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԹԱՆԳԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հոդված ~~21~~23. Թանգարանների ~~և Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի~~ ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

1) սահմանում է թանգարանների և Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի պահպանության և օգտագործման ոլորտում պետական քաղաքականության իրականացումը.

2) ապահովում է Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առանձնակի արժեքավոր և բացառիկ կարևորության ~~պետական~~ մասի և Հայաստանի Հանրապետության ազգային թանգարանային հավաքածուի պահպանությունը, համալրումը և օգտագործումը.

3) հաստատում թանգարանների հավատարմագրման կարգն ու չափորոշիչները:

4) ստեղծում է պետական թանգարաններ, արգելոց-թանգարաններ և թանգարան-ինստիտուտներ:

Հոդված ~~22~~24. Թանգարանների ~~բնագավառում~~ ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի լիազորությունները

1. Լիազոր պետական մարմինը՝

1) հսկողություն է իրականացնում իր ենթակայության պետական թանգարանների գործունեության նկատմամբ.

2) վարում է Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակը (ռեեստրը) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.

3) հաստատում է պետական թանգարանների զարգացման հայեցակարգերը, ծրագրերը, հիմնական ցուցադրության գիտական պլանը և ~~հիմնական ցուցադրության~~ գեղարվեստական նախագծերը.

4) հսկողություն է իրականացնում ~~թանգարանի~~ թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանության կանոնների նկատմամբ՝ մասնագիտական հանձնաժողովների միջոցով.

5) կազմակերպում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բռնագրավված, հօգուտ պետությանը տիրազուրկ ճանաչված և ժառանգության իրավունքով պետությանն անցած, անտնտեսվար պահվող մշակութային արժեքների և հավաքածուների պետական թանգարաններ մշտական պահպանության հանձնումը.

6) ~~ապահովում~~ սահմանում է ~~թանգարանների~~ թանգարանային առարկաների և հավաքածուների վերականգնման չափանիշները և ապահովում ամրակայումը և վերականգնումը.

7) սահմանում է թանգարանային աշխատողների մասնագիտական որակավորման չափանիշները.

8) սահմանում է իր ենթակայության թանգարանի աշխատողների պաշտոնների օրինակելի նկարագիրը.

9) կազմակերպում է թանգարանի աշխատողների վերապատրաստման, որակավորման բարձրացման, համակարգի զարգացման ծրագրերի մշակումը և դրանց իրականացումը.

10) հաստատում է թանգարանների ֆոնդային-գնահատող հանձնաժողովի աշխատակարգի օրինակելի ձևը.

11) հսկողություն է իրականացնում թանգարաններին ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ, եթե այդ լիազորությունը թանգարանի կանոնադրությամբ վերապահված չէ այլ մարմնի.

12) հաստատում է պետական թանգարանային աշխատողների ատեստավորման կարգի օրինակելի ձևը.

13) հաստատում է պետական թանգարանների, արգելոց-թանգարանների ~~մշտական~~ հիմնական ցուցադրության այցելության տոմսերի, մասնագիտական

լուսանկարման, ~~և~~ տեսագրման, անվճար օգտվողների և թանգարանների կողմից մատուցվող ծառայությունների ցանկերը և սակագները, եթե այդ լիազորությունը թանգարանի կանոնադրությամբ վերապահված չէ այլ մարմնի.

14) հաստատում է արգելոցների, արգելոց-թանգարանների և թանգարանների տարածքները վարձակալության տրամադրելու ընթացակարգը:

~~հաստատում է թանգարանի թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանության կանոնները~~.

15) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ,

~~16~~16) ~~-~~ իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող հայկական մշակութային արժեքների հաշվառման, ուսումնասիրման աշխատանքներ՝ այդ երկրի օրենսդրության, միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում.

~~հաստատում է պետական թանգարաններից անվճար օգտվողների և թանգարանների կողմից մատուցվող ծառայությունների ցանկերը և սակագները, եթե այդ լիազորությունը թանգարանի կանոնադրությամբ վերապահված չէ այլ մարմնի.~~

17) ~~իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող հայկական մշակութային արժեքների հաշվառման, ուսումնասիրման աշխատանքներ՝ այդ երկրի օրենսդրության, միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում.~~

~~18~~17) սահմանում է թանգարանի թանգարանային~~, մշակութային~~ առարկաների և հավաքածուների պահպանության և ժամանակավոր պահպանության ընթացակարգը և պ~~այմանակարգ.~~

~~19) սահմանում է թանգարանային առարկաների և հավաքածուների ժամանակավոր պահպանության ընթացակարգը.~~

~~20~~18) իրականացնում է Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի պահպանության նկատմամբ հսկողություն.

1921) հաստատում է թանգարանային առարկաների և հավաքածուների վերականգնողի որակավորման կարգը և չափորոշիչները.

2220) հաստատում է ռազմական դրության ժամանակ և արտակարգ իրավիճակում Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածույում և Հայաստանի Հանրապետության առանձնակի արժեքավոր և բացառիկ կարևորության ազգային թանգարանային հավաքածույում ընդգրկված թանգարանային առարկաների և հավաքածուների տարհանման և դրանց պաշտպանության կարգը.

23) հաստատում է Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի և Հայաստանի Հանրապետության ազգային թանգարանային հավաքածուի մասին կանոնակարգը և վկայականի ձևը.

2421) հաստատում է Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի առարկայացուցակում ընդգրկված թանգարանային առարկաների ու հավաքածուների թվանշայնացված տեղեկույթի ստեղծման, վարման, օգտագործման և տրամադրման կարգը.

2522) սահմանում է պետական և համայնքային թանգարանների հավաքածուի հասանելիության ապահովման կարգը.

2623) հաստատում է թանգարանային առարկաների և հավաքածուների հաշվառման, պահպանության, անվտանգության, ամրակայման և վերականգնման աշխատանքների իրականացման կարգը.

2724) հաստատում է թանգարանային առարկաների և հավաքածուների հաշվառման կարգը:

25) սահմանում է Հայաստանի Հանրապետության առանձնակի արժեքավոր և բացառիկ կարևորության թանգարանային հավաքածուի համալրման կարգը:

Հոդված ~~23~~25. Թանգարանների ~~և Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի~~ոլորտում ~~Տեղական~~ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները

1. Թանգարանային ոլորտում տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքներով սահմանված լիազորությունները:

Հոդված ~~24~~26. Թանգարանների ~~և Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի~~ոլորտում ~~Տարածքային~~ տարածքային կառավարման և այլ պետական մարմինների լիազորությունները

1. Տարածքային կառավարման և այլ պետական մարմինները՝

1) իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված ~~25~~27. Թանգարանների խորհրդի լիազորությունները

1. Թանգարանների խորհուրդը հասարակական հիմունքներով գործող խորհրդակցական մարմին է, որի նպատակն է թանգարանային գործունեության կազմակերպման հիմնարար հարցերի ~~քննարկելը~~քննարկումը:

2. Թանգարանների խորհուրդը կազմված է 15 անդամից: Խորհուրդը բաղկացած է մշակույթի բնագավառի լիազոր պետական մարմնի հինգ, զբոսաշրջության բնագավառի լիազոր պետական մարմնի, տարածքային կառավարման բնագավառի լիազոր պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի մեկական ներկայացուցիչներից, ինչպես նաև կարող են ռոտացիոն կարգով ընդգրկվել թանգարանների (անկախ ենթակայությունից և սեփականության ձևից), մշակութային հասարակական կազմակերպությունների մեկական ներկայացուցիչներ, գիտնականներ, մասնագետներ: Ի պաշտոնե խորհրդի նախագահն է մշակույթի բնագավառի լիազոր պետական մարմնի ղեկավարը:

3. Թանգարանների խորհուրդը առաջարկություններ է ներկայացնում բնագավառի լիազոր պետական մարմին՝ թանգարանների գործունեության և գործունեությանը նպաստող պետական ռազմավարության մշակման, թանգարանային քաղաքականության, գիտական ծրագրերի վերաբերյալ:

4. Թանգարանների խորհրդի աշխատակարգը և անհատական կազմը հաստատում է՝ մշակույթի բնագավառի լիազոր պետական մարմնը՝ 3 տարի ժամկետով:

Հոդված 28. Թանգարանի աշխատողների իրավունքները և պարտականությունները

1. Թանգարանի աշխատողի իրավունքներ են՝

1) Օրենքով սահմանված կարգով կրթությանը, որակավորմանը և մասնագիտացմանը համապատասխան՝ իրենց իրավասությունների շրջանակներում իրականացնելու թանգարանների բնագավառում մասնագիտական գործունեություն,

2) օրենքով սահմանված կարգով մասնակցելու շարունակական մասնագիտական զարգացման գործընթացին.

3) օրենքով սահմանված կարգով պաշտպանելու իրենց մասնագիտական համբավը, պատիվը և արժանապատվությունը.

4) թանգարանի յուրաքանչյուր աշխատող առանց որևէ խտրականության, ունի աշխատանքի համար համարժեք վարձատրության իրավունք.

5) թանգարանի աշխատողները օգտվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սոցիալական ապահովության իրավունքներից և երաշխիքներից.

6) օգտվելու օրենքով սահմանված այլ իրավունքներից:

2. Թանգարանի աշխատողի պարտականություններ են՝

1) իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնել Հայաստանի Հանրապետության թանգարանների բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած մասնագիտական բնութագրին համապատասխան.

2) գործունեության ընթացակարգով կատարել սահմանված պահանջները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում.

3) թանգարանի աշխատողը պարտավոր է պահպանել Հայաստանի Հանրապետության թանգարանի աշխատողի վարքագծի կանոնակարգի պահանջները:

Հոդված 29. Մշակույթի զարգացման հիմնադրամը և դրա

1. Մշակութային կազմակերպությունների զարգացման և լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարություն ստեղծում է մշակույթի զարգացման հիմնադրամ, որի նպատակները, լիազորությունները և գործունեության ու կառավարման հարցերը սահմանվում է կանոնադրությամբ:

ԳԼՈՒԽ 5.

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված ~~26~~30. Թանգարանների ֆինանսավորումը

1. Պետական թանգարանների ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

2. Համայնքային թանգարանների ֆինանսավորումն իրականացվում է համայնքի բյուջեի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

3. Ոչ պետական թանգարանների ֆինասնավորում է հիմնադրի կողմից և օրենքով չարգելված այլ միջոցներից:

ԳԼՈՒԽ 6.

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 31~~27~~. Սույն օրենքի խախտման համար պատասխանատվությունը

1. Սույն օրենքի պահանջները խախտող անձինք կրում են Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն:

Հոդված ~~28~~32. Թանգարանային ~~և մշակութային~~ առարկաներին վնաս պատճառելու դեպքում դրանց ~~վերականգնումը~~ վերականգնումն ու վնասի հատուցումը

1. Թանգարանային ~~և մշակութային~~ առարկաների վնասի դեպքում կամ պահպանության կանոնների խախտման արդյունքում ~~—~~վնաս պատճառած քաղաքացիները, թանգարանի աշխատակիցները և պաշտոնատար անձիք ~~իրավաբանական և ֆիզիկական անձինք~~ պարտավոր են վերականգնել դրանց նախկին վիճակը սեփական միջոցների հաշվին, իսկ վերականգնելու անհնարինության դեպքում հատուցել պատճառած վնասները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 7.

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված ~~29~~33. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի ուժի մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Հոդված 34. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սահմանել, որ գործող պետական և համայնքային թանգարանները հավատարմագրվում են պարզեցված կարգով, իսկ սահմանված նորմերին չհամապատասխանելու դեպքում՝ կառավարության սահմանած ժամկետներում, բայց տարեկան առնվազն 2 թանգարան համապատասխանեցվում է հավատարմագրման չափանիշներին:

:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ

(Կ-717-20.11.2023,10.01.2024-ԳԿ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Թանգարանների մասին» օրենքի նախագծում փոփոխություններ և լրացում կատարելու մասին					
1.	ՀՀ կառավարություն	**4-րդ հոդված**	4-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով «Սույն օրենքը չի արգելում «թանգարան» բառի օգտագործումը այլ կազմակերպական-իրավական ձև ունեցող իրավաբանական անձանց անվանման մեջ եթե իրականացնում են թանգարանային հավաքածուների ուսումնասիրման և հանրահռչակման գործունեություն:»: Լրացումը պայմանավորված է մշակութային ժառանգության բնագավառում ներքին հակասությունները բացառելու նպատակով:	Ընդունվել է:	Ընդունվել է

2.	*ՀՀ կառավարություն*	**12-րդ հոդվածի 4-րդ կետ**	12-րդ հոդվածի 4-րդ կետում «ղեկավարի ներկայացմամբ» բառերից հետո լրացնել «լիազոր պետական մարմնի համաձայնությամբ:» բառերը Լրացումը պայմանավորված է թանգարանների բնագավառում միասնական քաղաքականության իրականացմամբ:	Ընդունվել է:	Ընդունվել է
3.	*ՀՀ կառավարություն*	**12-րդ հոդվածի 6-րդ կետ**	12-րդ հոդվածի 6-րդ կետում «ղեկավարի ներկայացմամբ» բառերից հետո լրացնել «լիազոր պետական մարմնի տեղեկացմամբ» բառերը Լրացումը պայմանավորված է թանգարանների բնագավառում միասնական քաղաքականության իրականացմամբ:	Ընդունվել է:	Ընդունվել է
4.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի հոդվածների համարակալման հաջորդականությունն անհրաժեշտ է վերանայել,	մասնավորապես, 3-րդ հոդվածին հաջորդում է 5-րդ հոդվածը:	Ընդունվել է:	Ընդունվել է
5.	*ՀՀ կառավարություն*	**5-րդ հոդված**	Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում «որոշակի» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «թանգարաններ,» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է
6.	*ՀՀ կառավարություն*	**5-րդ հոդված**	Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասում «դասակարգումը» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «ըստ հավաքածուի բնույթի» բառերով՝ նկատի ունենալով 5-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:	Ընդունվել է:	Ընդունվել է
7.	*ՀՀ կառավարություն*	**13-րդ հոդված**	Նախագծի 13-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի մեջ ընդգրկված ոչ պետական թանգարանի թանգարանային առարկաները և	Ընդունվել է:	Ընդունվել է

			հավաքածուները (ամբողջական կամ առանձին) կարող են օտարվել՝ այդ մասին նախապես գրավոր տեղեկացնելով լիազոր պետական մարմնին:		
8.	*ՀՀ կառավարություն*	**2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն. «Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածու. մշտապես Հայաստանի Հանրապետության պահպանության ներքո գտնվող, թանգարանների գլխավոր մատյաններում հաշվառված և շարունակաբար համալրվող թանգարանների առարկաների և հավաքածուների ամբողջություն, որն անօտարելի է և Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգության անբաժանելի մասն է.»: Հետևապես, քանի որ վերոնշյալ դրույթների միջև առկա է հակասություն, ուստի կարծում ենք, որ նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում անհրաժեշտ է սահմանել բացառություն՝ Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի մեջ ընդգրկված ոչ պետական թանգարանի թանգարանային առարկաների և հավաքածուների օտարման մասին:	Ընդունվել է:	Ընդունվել է
9.	*ՀՀ կառավարություն*	**17-րդ հոդված**	Նախագծի 17-րդ հոդվածի 2-րդ մասից անհրաժեշտ է հանել «կողմից» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է
10.	*ՀՀ կառավարություն*	**23-րդ հոդված**	Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում պարզաբանման կարիք ունի «անտնտեսվար պահվող թանգարանային առարկաներ» հասկացությունը: Նույն մասի 12-րդ, 13-րդ և 16-րդ կետերում «հաստատում է» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «պետական» բառը՝ նկատի ունենալով, որ լիազոր պետական մարմինը կարող է սահմանել պետական թանգարանների աշխատողների ատեստավորման կարգը, այցելության տոմսերի, մասնագիտական լուսանկարման և տեսագրման սակագները, թանգարաններից անվճար	Ընդունվել է:	Ընդունվել է

			օգտվողների և թանգարանների կողմից մատուցվող ծառայությունների ցանկերը և սակագները: Հիշյալ դիտողությունը բխում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի պահանջներից:		
11.	*ՀՀ կառավարություն*	**23-րդ հոդված**	Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն՝ լիազոր պետական մարմինը. «իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող հայկական մշակութային արժեքների հաշվառման, ուսումնասիրման աշխատանքներ՝ այդ երկրի օրենսդրության, միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում»: Նախագծի 1-ին հոդվածի համաձայն. «Սույն օրենքը կարգավորում է թանգարանների գործունեության հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանում է թանգարանների տեսակները, գործառույթները, Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածուի ձևավորման, համալրման, հաշվառման, պահպանության և անվտանգության իրավական հիմքերը:»: Հետևապես, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող հայկական մշակութային արժեքների հաշվառման և ուսումնասիրման աշխատանքները սույն ակտի կարգավորման առարկան չեն, քանի որ այդ մշակութային արժեքները ընդգրկված չեն թանգարանների գլխավոր մատյաններում: Ուստի վերոնշյալ դրույթն անհրաժեշտ է հանել:	Չի ընդունվել, քանի որ սահմանվում է լիազորող նորմ որով հնարավորություն է ստեղծվում իրականացնել արտերկրի թանգարաններում առկա մեր ժառանգության հաշվառման վերաբերյալ:	Չի ընդունվել
12.	*ՀՀ կառավարություն*	**23-րդ հոդված**	Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետում անհրաժեշտ է պարզաբանել «կոնսերվացման» հասկացությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է

		24-րդ հոդված	Նախագծի 24-րդ հոդվածի համաձայն. «Թանգարանային ոլորտում տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված լիազորությունները:»: Այդ առումով հարկ է նշել, որ վերոհիշյալ օրենքներում թանգարանային ոլորտին վերաբերող կարգավորումներ և լիազորություններ չեն սահմանված:	Ընդունվել է	Ընդունվել է
13.	*ՀՀ կառավարություն*	**25-րդ հոդված**	Նախագծի 25-րդ հոդվածում «իրականացնում է» բառերն անհրաժեշտ է փոխարինել «իրականացնում են» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է
14.	*ՀՀ կառավարություն*	**24-րդ հոդված**	Նախագծի 24-րդ հոդվածի 1-ին մասում «քննարկելն է» բառերն անհրաժեշտ է փոխարինել «քննարկելը» բառով: Փոփոխությունը պայմանավորված է Նորմատիվ իրավական ակտերում իրավական նորմերի անհիմն կրկնությունները, և ներքին հակասությունները բացառելու նպատակով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
15	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Թագուհի Ղազարյան	**2-րդ հոդվածի 1-ին մաս**	Լրացվել է հետևյալ բովանդակությամբ 16) մշակութային արժեքների փորձաքննություն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվող մշակութաբանական կամ արվեստաբանական հետազոտություն, որի շնորհիվ տրվում է առարկայի մշակութային արժեք համարվելու կամ չհամարվելու վերաբերյալ փորձագիտական եզրակացություն. 17) թանգարանի հավատարմագրում՝ թանգարանի չափորոշիչներին և ինստիտուցիոնալ հավատարմագրման համապատասխանության ճանաչումն է թանգարանների ոլորտի օրենսդրության դրույթներին, դրանց համապատասխանությունը հաստատելու նպատակով.	Ընդունվել է:	Ընդունվել է

			18) թանգարանային կրթություն՝ ոչ ֆորմալ ուսումնառություն, որն իրականացվում է թանգարանային գործառույթներ իրականացնող կազմակերպության կողմից և ապահովում է թանգարանային հավաքածուների զգայական և ճանաչողական հաղորդակցումը և մեկնաբանությունը. 19) արգելոց-թանգարան՝ բացօթյա թանգարանի տեսակ կամ մշակութային համալիր հաստատություններ, որոնք ստեղծվել են մշակութային ժառանգության թանգարանացման իրագործման համար հնագույն ժամանակներում պատմականորեն ձևավորված տարածքների վրա հստակ տեղայնացված հուշարձանների սահմաններում՝ ապահովելու վերջինների հնագիտական, մշակութային և բնական ամբողջական արժեքների պահպանությունը, հետազոտումը և հանրահռչակումը:		
	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Թագուհի Ղազարյան	**6-րդ հոդված**	Լրացվել է Թանգարանի հավատարմագրման չափորոշիչները	Ընդունվել է:	Ընդունվել է
	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Թագուհի Ղազարյան	**28-րդ հոդված**	Լրացվել է Հոդված 28. Թանգարանի աշխատողների իրավունքները և պարտականությունները	Ընդունվել է:	Ընդունվել է
	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Թագուհի Ղազարյան	**29-րդ հոդված**	Լրացվել է Հոդված 29. Մշակույթի զարգացման հիմնադրամ	Ընդունվել է:	Ընդունվել է
	ՀՀ Ազգային ժողովի	**21-րդ հոդված**	Լրացվել է Հոդված 21. Թանգարանային կրթություն	Ընդունվել է:	Ընդունվել է

	պատգամավոր Թագուհի Ղազարյան				
	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Լիլիթ Գալստյան	Վերանագիրը հոդված 1.	1. Օրենքի նախագծի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Թանգարանների և թանգարանային գործունեության մասին»: 2. Հոդված 1-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքը կարգավորում է թանգարանների ստեղծման և գործունեության հետ կապված իրավահարաբերությունները, սահմանում է թանգարանների տեսակները, գործառույթները և առանձնահատկությունները, թանգարանային հավաքանու ձևավորման, համալրման, հաշվառման, պահպանման, օգտագործման և անվտանգության իրավական հիմքերը, պետական թանգարանային քաղաքականության սկզբունքները»: 3. Նախագծի հոդված 2-ը դարձնել «Հոդված 3» և «Հոդված 3-ը»՝ «Հոդված 2»: 4. Հոդված 2-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Թանգարանների և թանգարանային գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին», «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաեւ	Չի ընդունվել: Չի ընդունվել: Ընդունվել է	Չի ընդունվել Չի ընդունվել Ընդունվել է

			Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով»: 3. Նախագծի հասկացություններում սահմանել կամ վերաշարադրել հետևյալ հասկացությունները՝«պետական թանգարան՝ թանգարանային գործունեություն իրականացնող, իրավաբանական անձ հանդիսացող պետական ոչ առևտրային կազմակերպություն կամ պետական մարմնի կամ կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանում (մասնաճյուղ, հիմնարկ, բաժին), որը հիմնադրվում է պետության կողմից Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքանի մուտքագրված թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների պահպանման, ուսումնասիրման և հրապարակման, ինչպես նաև՝ սույն օրենքով սահմանված այլ նպատակների իրականացման համար և որին, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով, տրվում է պետական աջակցություն».	Չի ընդունվել	Չի ընդունվել
			«ոչ պետական թանգարան՝ թանգարանային գործունեություն իրականացնող իրավաբանական անձ հանդիսացող ոչ առևտրային կազմակերպություն կամ այլ կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանում (մասնաճյուղ, հիմնարկ, բաժին), որը հիմնադրվում է սեփականատիրոջ կողմից Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքանի մուտքագրված թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների պահպանման, ուսումնասիրման և հրապարակման, ինչպես նաև՝ սույն օրենքով սահմանված այլ նպատակների	Չի ընդունվել	Չի ընդունվել

			իրականացման համար և որին սահմանված կարգով տրվում է պետական աջակցություն»: «մշակութային առարկա» հասկացությունը փոխարինել «թանգարանային նշանակության առարկա» հասկացությամբ. «թանգարանային նշանակության առարկա՝ մշակութային նշանակության առարկա, որը չի հանդիսանում գիտելիքի և զգայության սկզբնաղբյուր և չունի թանգարանային առարկային բնորոշ հատկանիշներ և որակ, ուստի չի մուտքագրվում թանգարանային հավաքանու հիմնական մասնաբաժնում, սակայն ժամանակի ընթացքում կարող է ձեռք բերել թանգարանային առարկայի արժեք և կարգավիճակ».	Ընդունվել է	Ընդունվել է
			«թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների պետական հաշվառում՝ միջոցառումների համակազմ, որով ապահովվում է թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների նույնականացումը և առարկայական քանակային հաշվառումը՝ դրանց պետական հսկողության և իրավաբանական պաշտպանության ապահովման նպատակով».	Չի ընդունվել	Չի ընդունվել
			«թանգարանի գլխավոր <u>գույքամատյան</u>՝ թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների պետական հաշվառման վավերացված մատյան, որ ենթակա է թանգարանում մշտական պահպանության և սահմանված ձևաչափով տեղեկություններ է բովանդակում թանգարանային հավաքանու հիմնական մասնաբաժնում ներառված թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների մասին».	Ընդունվել է	Ընդունվել է

			«Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքածու» հասկացությունը փոխարինել «Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքանի» հասկացությամբ. «Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքանի՝ մշտապես Հայաստանի Հանրապետության պահպանության ներքո գտնվող, թանգարաններում և այլ կազմակերպություններում պահպանվող, թանգարանների գլխավոր գրանցամատյաններում հաշվառված և շարունակաբար համալրվող թանգարանային առարկաների եւ հավաքածուների ամբողջություն, այդ թվում՝ պատմամշակութային և բնական շարժական հուշարձաններ, որոնք անօտարելի են եւ հանդիսանում են Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգության անբաժանելի մասը».	Չի ընդունվել	Չի ընդունվել
			«ազգային թանգարանային հավաքանի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող, պատմականորեն կազմավորված (սկզբնավորված) և մշտապես համալրվող առանձնակի արժեքավոր և եզակի թանգարանային առարկաները և թանգարանային հավաքածուները (անկախ ծագումից և սեփականության ձևից), որոնց քաղաքացիական (առևտրային) շրջանառությունը թույլատրվում է սույն օրենքով սահմանված սահմանափակումների պահպանմամբ և ենթակա են հաշվառման հատուկ պահպանության համապատասխան պայմանակարգով». «Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքանու պետական առարկայացուցակ՝ Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքանի մուտքագրված թանգարանային	Չի ընդունվել	Չի ընդունվել

			առարկաների և թանգարանային հավաքածուների պետական հաշվառման տեղեկատվական համակարգ, որը պետության կողմից ստեղծվում է մշակութային արժեքների պետական հսկողության և իրավաբանական պաշտպանության ապահովման նպատակով».		
			«թանգարանային առարկայի և հավաքածուի <u>պահպանում</u>՝ թանգարանային գործունեության հիմնական տեսակներից մեկը, որը նախատեսում է թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների պաշտպանությանն ու վտանգների կանխարգելմանն ուղղված նյութական և իրավաբանական պայմանների, գիտականորեն հիմնավորված պահպանության հատուկ ռեժիմ».		
			«թանգարանային առարկայի և հավաքածուի <u>պահպանություն</u> թանգարանային գործունեության հիմնական տեսակներից մեկը, որը նախատեսում է իրավական, կազմակերպական և ֆինանսատնտեսական այնպիսի միջոցառումների համակազմ, որով ապահովվում է թանգարանի շենքի և թանգարանային հավաքանու անձեռնմխելիությունը».	Ընդունվել է	ԸՆդունվել է
			«թանգարանային առարկայի և հավաքածուի ուսումնասիրում ՝ թանգարանային գործունեության հիմնական տեսակներից մեկը, որի նպատակն է թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների պատմական, գեղարվեստական, գիտական կամ այլ մշակութային նշանակության բացահայտումը, մեկնաբանումը և արձանագրումը».	Չի ընդունվել	Չի ընդունվել
			«թանգարանային առարկայի և հավաքածուի հանրայնացում և հրապարակում՝ թանգարա-նային գործունեության հիմնական տեսակներից մեկը, որ		

			նախատեսում է թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների ներկայա-ցումը ցուցադրման, հանրահռչակման, գիտակրթական գործունեության, վերարտադրման (տպագիր, էլեկտրոնային և այլ նյութական կրիչներով), տեղեկատվա-հեռահաղորդակցային ցանցում թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների մասին տեղեկատվության զետեղման և տարածման եղանակներով».		
		Նոր առաջարկ	4. Նախագծում ներառել հետևյալ նոր հասկացությունները՝ «պետական թանգարանային քաղաքականություն», «առանձնակի նշանակության մշակութային արժեքներ», «մշակութային և բնական շարժական հուշարձան», «թանգարանային հավաքանու հիմնական մասնաբաժին», «թանգարանային հավաքանու օժանդակ մասնաբաժին», «թանգարանային փոխանակման հավաքանի», «թանգարանային հավաքանու արժեվորման և գնահատման հանձնաժողով», «Հայաստանի Հանրապետության թանգարանային հավաքանի», «արգելոց-թանգարան», «թանգարանային գործունեություն», «համալրում», «թանգարանացում», «ամրակայում», «վերականգնում», «թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների գիտական փորձաքննություն», «թանգարանային աշխատողներ»:	Չի ընդունվել	Չի ընդունվել
		Նոր կարգավորում, դասավորություն	5. Նախագծի Գլուխ 1-ը («Ընդհանուր դրույթներ») լրացնել նոր հոդվածներով. «Պետական կարգավորումը և պետական հսկողությունը թանգարանային գործի բնագավառում» և «Պետական թանգարանային քաղաքականության	Չի ընդունվել	Չի ընդունվել

			սկզբունքները և պետության գործունեությունը թանգարանային գործի բնագավառում»: 6. Նախագծի Գլուխ 2-ում ներառված «Թանգարանների տեսակները» (Հոդված 5), «Թանգարանների գործունեության նպատակները և գործառույթները» (Հոդված 6), «Թանգարանների օգտագործումը» (Հոդված 20), «Թանգարանների ձեռնարկատիրական գործունեությունը» (Հոդված 21), «Թանգարանների ֆինանսավորումը» (Գլուխ 5, Հոդված 27, այդ գլխում միակը) հոդվածները ներառել առանձին նոր գլխում՝ «Թանգարանները և թանգարաների գործունեությունը», և վերոնշյալ հոդվածների դրույթները ենթարկել խմբագրման, լրացման և փոփոխության:	Չի ընդունվել	Չի ընդունվել
		Հոդված 5-ի 2-րդ կետը	7. վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ. ա) պատմական. թանգարաններ, որոնց թանգարանային հավաքանին վավերագրում է հասարակության զարգացման պատմությունը. բ) պատմա-երկրագիտական. թանգարաններ, որոնց գործունեության առարկան պատմական բնակավայրի կամ պատմաաշխարհագրական մարզի պատմական, բնական և մշակութային զարգացման վավերագրումն ու հրապարակային ցուցադրումն է. գ) պատմա-հնագիտական. թանգարաններ, որոնք հայտնաբերում, հավաքում, պահպանում, ուսումնասիրում, հրապարակում և հանրահռչակում են հնագիտական պեղումների և գիտահետազոտական գործունեության արդյունքում գտնված պատմական, գեղարվեստական, գիտական և այլ մշակութային նշանակության թանգարանային առարկաներ և թանգարանային հավաքածուներ.	Ընդունվել է մասնակի	Ընդունվել է մասնակի

			դ) պատմա-ազգագրական. թանգարաններ, որոնց թանգարանային հավաքանին վավերագրում է ազգերի և այլ էթնիկ խմբերի ծագումնաբանությունը, անցյալի և ներկայի մշակութային առանձնահատկությունները. ե)գրական. թանգարաններ, որոնց թանգարանային հավաքանին վավերագրում է գրականության պատմությունը և արդի գրականության զարգացումը, զ)գեղարվեստական. թանգարաններ, որոնք հայտնաբերում, հավաքում, պահպանում, ուսումնասիրում, հրապարակում և հանրահռչակում են արվեստի ստեղծագործություններ, վավերագրում ազգային և համաշխարհային կերպարվեստի, զարդային (դեկորատիվ)-կիրառական արվեստի պատմությունը և զարգացումը, է)գիտատեխնիկական. թանգարաններ, որոնք վավերագրում են գիտության և տեխնիկայի զարգացումը, ը)հուշային. թանգարաններ, որոնք ստեղծվում են համապատասխան միջավայրում պահպանված և կամ վերստեղծված պատմամշակութային նշանակության հուշային և հուշակենցաղային առարկաների հիման վրա՝ պատմական նշանավոր անձանց հիշատակի և պատմական իրադարձությունների հավերժացման նպատակով, թ) ոլորտային. թանգարաններ, որոնց թանգարանային հավաքանին ներկայացնում է գիտության կամ արտադրական գործունեության որոշակի ոլորտ. ժ) բնագիտական. թանգարաններ, որոնց թանգարանային հավաքանին վավերագրում է բնության մեջ կատարվող գործընթացները, բնության և հասարակության փոխգործակցությունը, ինչպես նաև՝ բնագիտական գիտակարգերի և բնօգտագործման զարգացումը.		

			ի) արգելոցային. թանգարաններ, որոնք ստեղծվում են պատմական, գիտական, գեղարվեստական կամ այլ մշակութային նշանակության հուշարձանախմբերի կամ հուշարձանային համալիրների, տեսարժան և գեղատեսիլ վայրերի պահպանման, ուսումնասիրման և հանրահռչակման ապահովման նպատակով, լ) թանգարան-ինստիտուտներ, որոնք ցուցադրություն-ներին զուգահեռ թանգարանագիտության բնագավա-ռում իրականացնում են կրթագիտական գործունեություն:		
		Հոդված 6	լրացնել հետևյալ գործառույթը՝ «Սույն օրենքով սահմանված նպատակների և գործառույթների շրջանակում թանգարանները կարող են իրականացնել նաև մշակույթի և թանգարանային գործի բնագավառներում կրթական մասնագիտական գործունեություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»:	Չի ընդունվել	Չի ընդունվել
			9. Միավորել և շարադրել նոր խմբագրությամբ:		
		Հոդված 20, 21	10. Նախագիծը լրացնել նոր՝ «Թանգարանային աշխատողների աշխատանքային հարաբերությունները, իրավական և հանրային պաշտպանությունը, մասնագիտական պատրաստումը, վերապատրաստումը և վերաորակավորումը» գլխով:	Ընդունվել է մասնակի	Ընդունվել է մասնակի
		Հոդված 27	11. Նախագծի Հոդված 27-ը («Թանգարանների ֆինանսավորումը») շարադրել նոր խմբագրությամբ. «Թանգարանների ֆինանսավորումը և նյութատեխնիկական ապահովումը»	Չի ընդունվել	Չի ընդունվել

			1. Թանգարանների ֆինանսավորումը և նյութատեխնիկական ապահովումը իրականացվում է հիմնադիրների միջոցներով: 2. Պետական թանգարանների ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ սուբսիդիայի պայմանագրի հիման վրա, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված պետական մշակութային կազմակերպություններին հատկացվող սուբսիդիաների հաշվարկման և տրամադրման կարգին համապատասխան, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ ձևով և կարգով: 3. Ոչ պետական թանգարանների ֆինանսավորումն իրականացվում է հիմնադիրների միջոցներով և չի կարող պակաս լինել պետական և համայնքային թանգարաններին, պետական և համայնքային այլ կազմակերպություններին պետական և համայնքային բյուջեներից հատկացվող սուբսիդիայի հաշվարկված նորմատիվային չափից: 4. Ոչ պետական համայնքային թանգարանների ֆինանսավորումն իրականացվում է համայնքային բյուջեի միջոցներով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ սուբսիդիայի պայմանագրի հիման վրա, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված պետական մշակութային կազմակերպություններին հատկացվող սուբսիդիդիաների հաշվարկման և տրամադրման կարգին համապատասխան, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ ձևով և կարգով:		

			5. Պետական թանգարանների սույն օրենքով սահմանված նպատակներին համապատասխան և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ձեռնարկատիրական (եկամտաբեր) գործունեությունից ստացված միջոցները հաշվետու ժամանակամիջոցում և բյուջետային տվյալ տարվա ընթացքում ենթակա չեն ետ վերադարձման և հաջորդ տարվա ֆինանսավորման ծավալի նվազեցման համար: 6. Թանգարաններն ինքնուրույն են տնօրինում թանգարանային սպասարկումից (ծառայություններից) ու այլ եկամտաբեր գործունեությունից և ֆինանսական աղբյուրներից ստացված միջոցները և վարում դրանց առանձնացված հաշվապահական հաշվառումը: 7. Պետական և համայնքային թանգարաններին պետական և համայնքային բյուջեների միջոցներից հատկացվող սուբսիդիայի հաշվարկման և տրամադրման կարգը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: 8. Թանգարանների գույքը և ֆինանսական միջոցներն օգտագործվում են միայն թանգարանների կանոնադրությամբ սահմանված նպատակային նշանակությանը համապատասխան»:		

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	ՀՀ կառավարություն		օրենքի նախագծի վերնագրում «լրացում» բառն անհրաժեշտ է փոխարինել «լրացումներ» բառով, քանի որ նախագծում երկու լրացում է նախատեսվում: Միաժամանակ, նախագծի 2-րդ հոդվածում ««95» թվից հետո լրացնել «95.7» թիվը» բառերն անհրաժեշտ է փոխարինել ««95-րդ» բառից հետո լրացնել «,95.7-րդ» բառը» բառերով: Փոփոխությունը պայմանավորված է Նորմատիվ իրավական ակտերում իրավական նորմերի անհիմն կրկնությունները, և ներքին հակասությունները բացառելու նպա-տակով:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Թագուհի Ղազարյան	Հոդված 1	Առանձնացնել պատասխանատվության ենթարկվող սուբյեկտներին՝ քաղաքացիների, թանգարանի աշխատողների և պաշտոնատար անձանց	Ընդունվել է	Ընդունվել է